«ՀԱՏՇԻՆ ՔՈՆՍԹՐԱՔԹ»
սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՀՀ Կոտայքի մարզի Նոր գյուղ բնակավայրի 1-ին փողոց 7 հասցեում «Հասարակական նշանակության օբյեկտի վերակառուցում բնակելի թաղամասի» և նոր մասնաշենքի կառուցման

# ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կատարող՝ «Քոնսեկոարդ» ՍՊԸ
Տնօրեն՝ Մ. Թևոսյան

ԵՐԵՎԱՆ 2025

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 5
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 6
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 11
3.1. Տեղադիրքը 11
3.2. Շրջանի երկրաբանական կառուցվածքը 14
3.3. Սեյսմիկ պայմանների բնութագիր 15
3.4. Կլիմա 16
3.5. Օդային ավազան 19
3.6. Աղմուկ և թրթռում 20
3.7. Ջրային ռեսուրսներ 22
3.8. Հողային ռեսուրսներ 24
3.9. Կենսաբազմազանություն 25
*3.9.1. Բուսական աշխարհ* 25
*3.9.2. Կենդանական աշխարհ* 26
3.10. Բնության հատուկ պահպանվող տարածքներ և բնության հուշարձաններ 27
3.11. Պատմամշակութային միջավայր 30
4. ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 31
4.1. Կոտայքի մարզ 31
5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 33
5.1. Ընդհանուր տեղեկատվություն 33
5.2. Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ 35
5.3. Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներ 37
5.4. Նախապատրաստական աշխատանքներ 42
5.5. Շինարարական աշխատանքներ 43
*5.5.1. Ընդհանուր դրույթներ* 43
5.6. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում 46
6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 47
6.1. Բնապահպանական ռիսկեր 47
6.1. Օդային ավազան 48
6.2. Աղմուկի մակարդակը 52
6.3. Թրթռում 53
*6.4. Ջրային ռեսուրսներ* 53
*6.5. Հողային ռեսուրսներ* 54
6.6. Թափոնների կառավարում 54
6.7. Սոցիալ տնտեսական ազդեցություններ և առողջապահական գործոններ 55
7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ 55

7.1. Բնապահպանական միջոցառումների ծրագիր ____ 55
*7.1.1. Մթնոլորտային օդ* ____ 56
*7.1.2. Ջրային ռեսուրսներ* ____ 56
*7.1.3. Աղմուկի և թրթռումների ազդեցություն և մեղմացում* ____ 57
*7.1.4. Հողային ռեսուրսներ* ____ 57
*7.1.5. Թափոնների կառավարում* ____ 58
*7.1.6. Կենսաբազմազանություն* ____ 59
*7.1.7. Սոցիալական միջոցառումներ* ____ 60
*7.1.8. Աշխատանքի անվտանգություն և առողջություն* ____ 60
*7.1.9. Հակահրդեհային միջոցառումներ* ____ 61
8. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ ____ 61
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ ____ 63
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆՐԻ/ ՊԼԱՆ ____ 67
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ____ 70
ՀԱՎԵԼՎԱԾ 1. Անշարժ գույքի պետական գրանցման վկայական ____ 71
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Նախագծման թույլտվություն ____ 73
ՀԱՎԵԼՎԱԾ 3. Հողամասի հատակագիծ ____ 77
ՀԱՎԵԼՎԱԾ 4. Կանաչապատման/բարեկարգման նախագիծ ____ 79
ՀԱՎԵԼՎԱԾ 5. Ջրամատակարարման պայմանագիր ____ 82

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

«ՀԱՏՇԻՆ ՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվող բնակելի թաղամասի կառուցման գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը (այսուհետ՝ ՇՄԱԳ) և ՇՄԱԳ հաշվետվությունը մշակված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի (ՀՕ-150-Ն 03.05.2023), ինչպես նաև Օրենքից բխող այլ նորմատիվ իրավական ակտերի համաձայն:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-150-Ն 03.05.2023) 12-րդ հոդվածով սահմանված դասակարգումների համարվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

ՇՄԱԳ հաշվետվության բովանդակությունը սահմանվել և կազմվել է վերը նշված օրենքի պահանջներով՝ հաշվի առնելով նախագծային փաստաթղթով նախատեսված ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումները, նախագծման թույլտվությունը:

Աշխատանքային նախագծի ՇՄԱԳ հաշվետվությունը ներառում է՝

- նախատեսվող գործունեության նկարագիրը, ֆիզիկական բնութագիրը, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, օգտագործվող նյութերի, արտանետումների, արտահոսքերի, թափոնների ծավալները,
- հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի և բնական պայմանների նկարագիրը, էկոլոգիական և սոցիալական հնարավոր ազդեցությունների, ռիսկերի ու օգուտների վերլուծությունը և գնահատումը,
- հնարավոր արտակարգ իրավիճակների նկարագիրը, ազդեցության ծավալները, ինչպես նաև նվազեցման, մեղմացման կամ նվազեցման հնարավորությունները,

• մշակվել է բնապահպանական կառավարման պլան և շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկման ծրագիր՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կանխարգելելու, նվազեցնելու կամ բացառելու նպատակով,

• նախատեսվող գործունեության տարածքում այլ գործունեությունների իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա գումարային ազդեցությունը:

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունում /այսուհետ՝ ՇՄԱԳՀ/ ներկայացված նախատեսվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում «ՀԱՏՇԻՆ ՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊ ընկերությունը: Նախատեսվող գործունեության վայրը՝ Կոտայքի մարզ, Ակունք համայնք, Նոր գյուղ 1-ին փողոց 7: Տարածքի նախկին նշանակությունը եղել է «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն»:

Տարածքը բաղկացած է **2.9383 հա** ընդհանուր մակերեսով հողամասից,

կադաստրային ծածկագիրն է՝ **07-049-0030-0014**,

նպատակային նշանակությունը՝ **բնակավայրերի**,

գործառնական նշանակությունը՝ **բնակելի կառուցապատման** (Հավելված 3):

Հողատարածքը սեփականության իրավունքով պատկանում է «ՀԱՏՇԻՆ ՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ-ին (անշարժ գույքի պետական գրանցման վկայականը տես՝ Հավելված 1-ում):

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցութունների գնահատման և վերլուծության արդյունքներն ամփոփվել են սույն հաշվետվությունում: Գնահատման նպատակն է նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը:

Գործունեության իրականացման ընթացքում հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերն են՝

–օդային ավազանի աղտոտում՝ շինարարական աշխատանքների և շինարարական տեխնիկայի շարժիչների շահագործման ընթացքում,

–շինարարության փուլում մերձակա բնակչությանը /Ակունք համայնք,/ պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից,

–շինարարական մեքենաների և տեխնիկայի աշխատանքով պայմանավորված տեղի երթևեկության խափանում,

–հողերի և ջրային ռեսուրսների աղտոտում շինարարական աշխատանքների ընթացքում,

–հողերի աղտոտում՝ շինարարության և շահագործման ընթացքում առաջացող թափոններով, շինարարական և կենցաղային աղբով:

Հաշվետվությունում բնապահպանական ելակետային տվյալների հիման վրա առաջարկվել և ամփոփվել են վերը նշված ազդեցությունների և շրջակա միջավայրի մյուս բաղադրիչների վրա կանխարգելմանը և նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Հաշվետվության մշակման համար օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախատեսվող գործունեության ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,
- նախատեսվող գործունեության տարածքում իրականացված ինժեներաերկրաբանական հետազոտության արդյունքները,
- ճարտարապետահատակագծային առաջադրանքը,
- տարածաշրջանի վերաբերյալ վերլուծությունները, սխեմաները,
- շահագրգիռ կողմերի հետ բանակցություններն ու քննարկումները:

## 2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

***ՀՀ Սահմանադրություն*** (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<**Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը**>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

***«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ*** օրենք՝ խմբագրված՝ 03.05.2023թ. (ՀՕ-150-Ն), կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լսումների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության եւ նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:

***«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք*** (ընդունված 1994թ., վերջին փոփոխությունը՝ 2022թ.) - կարգավորում է.

1) մթնոլորտային օդի պահպանության իրավական եւ կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը.

2) մարդու առողջության եւ շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

***«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)*** - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

***«Հողի օգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենք*** (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

***«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք*** (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և

պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

***ՀՀ Ջրային օրենսգիրք (04.06.2002թ.)*** – նպատակն է ազգային ջրային պաշարի պահպանությունն է, օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության պահանջների բավարարման, շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովման, ինչպես նաև սույն օրենսգրքի խնդիրների լուծման համար իրավական հիմքերի ապահովումը:

***«Թափոնների մասին» ՀՀ օրենք (24.11.2004 թ.)*** - կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

***«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (03.04.2000թ.)*** - սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

***«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (23.11.1999թ.)*** - սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

***«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (27.11.2006թ.)*** - կարգավորում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

***«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենք (11.11.1998թ.)*** – նպատակն է հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառի իրավական հիմքերի սահմանումը, այդ գործունեության ընթացքում ծագող հարաբերությունների կարգավորումը:

***Բնապահպանական որակի ստանդարտներ,*** որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար:

ՇՄԱԳՀ կազմելիս ընկերությունն առաջնորդվել է նաև հետևյալ որոշումներով՝

–ՀՀ կենդանիների մասին գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում (N71-Ն, 29.01.2010թ.)

–ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում (N72-Ն, 29.01.2010թ.)

–ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում (N967-Ն, 14.08.2008թ.)

–Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 30.10.2008թ. N1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշում (N108-Ն, 8.02.2018թ.)

–ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին ՀՀ կատավարության որոշում (N781-Ն, 31.07.2017թ.)

- ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության եվ օգտագործման բնագավառում պետական ծրագիրը եվ միջոցառումները հաստատելու մասին 25 սեպտեմբերի 2014 թվականի N 1059-Ա որոշում
- ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշում

***Ուղեցույցներ և ստանդարտներ***

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2019), որը պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

***«ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*** ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ. N138-Ն հրաման,

«***ՀՈՂԻ ՈՐԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՋՆԵՐ N 2.1.7.003-10 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»*** ՀՀ առողջապահության նախարարի 01.25.2010թ. N01-Ն հրաման,

***«ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԹՐԹՌՄԱՆ (ՎԻԲՐԱՑԻԱՅԻ) ՀԻԳԻԵՆԻԿ ՆՈՐՄԵՐԸ»*** ՀՆ N 2.2.4-009-06 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ առողջապահության նախարարի 17.05.2006թ. N 533-Ն հրաման,

***«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք*** (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառկումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգը, Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

ՀՀ տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

Շինարարության ընթացքում կպահպանվեն ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի թիվ 12-Ն հրամանի պահանջները:

## 3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

### 3.1. Տեղադիրքը

Ակունք համայնքն իր վարչական սահմաններով սահմանակից է Չարենցավան, Գեղաշեն, Կամարիս, Կաթնաղբյուր, Արամուս, Մայակովսկի, Բալահովիտ, Աբովյան, Արզնի և Բյուրեղավան համայնքներին:

Ակունք համայնքը գտնվում է Աբովյան քաղաքից 6 կմ հս-արլ, Հատիս լեռան ստորոտին, մայրաքաղաքից հեռավորությունը կազմում է 20կմ, մարզկենտրոնից՝ 37.5 կմ: Համայնքը գտնվում է ծովի մակերևույթից 1350-2058մ բարձրության վրա:

Նոր Գյուղ բնակավայրը գտնվում է ծովի մակարդակից 1430 մ բարձրության վրա, հեռավորությունը Երևանից՝ 16 կմ, մարզկենտրոնից՝ 35 կմ:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Կոտայքի ՀՔԲ հարևանությամբ: Տարածքը հարավային կողմից սահմանակից է գլխավոր մայրուղուն, իսկ մյուս 3 կողմերից սահմանափակված է ներքին գրունտային ավտոճանապարհներով:

Բնակելի թաղամասը մայրուղու հետ կապված է 2 գրունտային ավտոճանապարհների միջոցով: Նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում: Բնակելի շենքերը տեղադրված են մայրուղուց 70-75մ հեռավորության վրա: Ամենամոտ գոյություն ունեցող մասնաշենքերից մեկը գտնվում է մայրուղուց 25մ հեռավորության վրա:

*Նկար 1. Իրադրային հատակագիծ*



ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Հողամասի գործառնական նշանակության փոփոխության առաջարկություն

Բնակավայրի հասարակական կառուցապատման 2.9383հա հողամասը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման փոփոխման




*Նկար 2. Հողամասի հատակագիծ*

*<u>Ռելիեֆը</u>*

Տարածաշրջանի ռելիեֆը մեղմ ալիքավոր է, տեղ-տեղ բարձրանում են հրաբխային խարամային կոները: Լեռնազանգվածների թեք ու անտառազուրկ լանջերը կտրտված են հեղեղատներով ու ոչ խորը գետահովիտներով:

Նախատեսվող գործունեության տարածքում ռելիեֆը թեք է, մասամբ հորիզոնականին մոտ, տեղ-տեղ ծորակներով մասնատված: Տարածքի մեծ մասում մակերևույթի գերակշռող թեքությունները 3-5$^{o}$:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքն իրենից ներկայացնում է Կոտայքի հրաբխային սարավանդի հարավ-արևմտյան եզրամասի փոքրաթեք դելյուվիալ լանջի մի հատված՝ հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք անկումով, որը քաղաքաշինական կառուցապատման հետևանքով ենթարկվել է փոփոխման:

Տեղամասի ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1431-1432 մ սահմաններում:




*Նկար 3. Ռելիեֆի ձևագրական փիպերը*

### 3.2. Շրջանի երկրաբանական կառուցվածքը

2024 թվականին «Գեոլիթ» ՍՊԸ կողմից իրականացվել է ինժեներաերկրաբանական հետազոտական և հետախուզահորերի փորման աշխատաքներ[1]:

Համաձայն հետազոտությունների երկրաբանական կառուցվածքում մասնակցում են նեոգենի ժամանակաշրջանի, վերին պլիոցեն դարակարգից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով: Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հաղմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

[1] Ինժեներաերկրաբանական հետազոտությունը կցվում է ՇՄԱԳ փաթեթին

Վերակառուցվող շենքի տեղամասը ներկայացնում են վերին պլիոցեն դարակարգի հրաբխային հոսքերը դոլերիտային բազալտները (այս շերտը փորված հետախուզահորերով չեն բացվել), որոնց ծածկում են դելյուվիալ-պրոլյուվիալ և ժամանակակից տեխնածին առաջացումները:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Տեղամասում փորված հետախուզահորերով գրունտային ջրերի հորիզոնը չի հատվել և ըստ ֆոնդային նյութերի դրանք գտնվում են 70 մետրից խորը հորիզոններում:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ վերակառուցվող կառույցի վրա բացակայում են:

### 3.3. Սեյսմիկ պայմանների բնութագիր

Հայաստանի Հանրապետությունը տարածքը գտնվում է Եվրասիական և Արաբական լիթոսֆերային խոշոր սալերի բախման գոտում և այս հանգամանքով է բացատրվում տարածաշրջանի բարձր սեյսմիկականությունը:

ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի՝ 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04- «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»: Այդ նորմերով սահմանվում են այն չափանիշները, որոնք պետք է կիրառվեն շենքերի ու կառուցվածքների նախագծման ու կառուցման ընթացքում /սեյսմակայունության հիմնական սկզբունքներ/: Նույն հրամանի հավելվածում ներկայացված է ՀՀ բնակավայրերի ցուցակը ըստ սեյսմիկ գոտիների: Այդ ցուցակում դիտարկվող տարածքը և մոտակա բնակավայրերը գտնվում են 2-րդ սեյսմիկ գոտում:

*Նկար 4. ՀՀ փարածքի հավանական սեյսմիկ վփանգի գոփիավորման քարփեզ*



Համաձայն տարածքում կատարված հետազոտությունների ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ վերակառուցվող կառույցի վրա՝ բացակայում են:

### 3.4. Կլիմա

Տարածաշրջանի կլիման մտնում է չափավոր ցուրտ ձմեռով և տաք ամառով բնորոշվող գոտու մեջ:

Կլիմայական պայմանները ըստ ամիսների, բերված են ստորև ներկայացված աղյուսակներում ըստ «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀՇՆ II-7.01-2024 նորմատիվային փաստաթղթի: Կլիմայի բնորոշման համար հիմք է վերցրվել մոտակայքում գտնվող Մայակովսկի օդերևույթաբանական կայանի դիտարկման արդյունքները: Համաձայն որի, օդի միջին տարեկան ջերմաստիճանը՝ 8.7$^{0}$C, բացարձակ նվազագույնը՝ -23$^{0}$C, բացարձակ առավելագույնը՝ 36$^{0}$C, օդի միջին տարեկան խոնավությունը՝ 66%, տարեկան մթնոլորտային տեղումների քանակը՝ 455 մմ:

Հարկ է նշել, որ քամու պարամետրերը նշվել են ըստ Ֆանտան օդերևութաբանական կայանի տվյալների, քանի որ դրանք Մայակովսկու օդերևութաբանական կայանում չեն իրականացվում:

*Աղյուսակ 3.1 Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը*

| Բնակավայրի անվանումը | Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, $C^0$ | | | | | | | | | | | | Միջին տարեկան$^0$ C | Բացարձակ նվազագույն $^0$C | Բացարձակ առավելա-գույն, $^0$C |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | | | |
| Մայակովսկի | -5.3 | -3.7 | 2.1 | 8.8 | 13.5 | 18.0 | 21.7 | 21.1 | 16.7 | 10.2 | 3.9 | -2.3 | 8.7 | -23 | 36 |

*Աղյուսակ 3.2. Օդի հարաբերական խոնավությունը*

| Բնակա-վայրի անվա-նումը | Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, % | | | | | | | | | | | | Միջին տարեկան | Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, % | | Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, % | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | Միջին ամսական | Միջին ամսական, ժամը 15-ին | Միջին ամսական | Միջին ամսական, ժամը 15-ին |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | | | | | |
| Մայակովսկի | 77 | 72 | 69 | 65 | 63 | 57 | 55 | 56 | 57 | 66 | 75 | 77 | 66 | 77 | - | 55 | - |

*Աղյուսակ 3.3. Մթնոլորտային տեղումները*

| Բնակավայրի անվանումը | Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ | | | | | | | | | | | | Տարեկան | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ըստ ամիսների | | | | | | | | | | | | | Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ | Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | | | |
| Մայակովսկի | 31 | 36 | 50 | 65 | 70 | 45 | 23 | 12 | 16 | 37 | 38 | 32 | 455 | 187 | 268 |
| | 29 | 18 | 30 | 40 | 57 | 33 | 31 | 42 | 29 | 41 | 51 | 19 | 57 | | |

*Աղյուսակ 3.4. Քամու պարամետրերը*

| Բնակավայրի անվանումը | Ամիսներ | Կրկնելիություն, % / միջին արագություն, մ/վ ըստ ուղղությունների | | | | | | | | Անդորրի կրկնելիությունը,% | Միջին ամսական արագությունը,մ/վ | Գերակշռող ուղղությունը հունիս-օգոստոս ամիսներին | Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ | Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-ծետրվար ամիսներին | Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հյուսիսային (Հս) | Հյուսիս-արևելյան (ՀսԱրլ) | Արևել-յան (Արլ) | Հարավ-արևելյան (ՀվԱրլ) | Հարավ (Հվ) | Հարավ-արևմտյան (ՀվԱրմ) | Արևմտյան (Արմ) | Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ) | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| ֆանտան | Հունվար | 2 | 8 | 4 | 10 | 29 | 40 | 6 | 1 | 41 | 2.1 | ՀսԱրլ | 5.6 | ՀվԱրլ | 2.9 |
| | | 4.7 | 4.6 | 2.5 | 2.7 | 3.3 | 3.9 | 3.6 | 3.6 | | | | | | |
| | Ապրիլ | 2 | 19 | 7 | 9 | 23 | 34 | 5 | 1 | 24 | 3.0 | | | | |
| | | 5.5 | 5.2 | 3.1 | 3.3 | 3.6 | 4.2 | 4.0 | 4.0 | | | | | | |
| | Հուլիս | 9 | 64 | 12 | 4 | 2 | 6 | 2 | 1 | 15 | 4.3 | | | | |
| | | 5.9 | 5.6 | 4.0 | 3.5 | 2.8 | 3.6 | 3.1 | 4.6 | | | | | | |
| | Հոկտեմ-բեր | 2 | 18 | 6 | 8 | 21 | 37 | 7 | 1 | 33 | 2.3 | | | | |
| | | 4.1 | 4.5 | 2.9 | 2.7 | 3.1 | 3.6 | 3.6 | 3.1 | | | | | | |

### 3.5. Օդային ավազան

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի օքսիդի, փոշու և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշման:

Մոնիթորինգի կենտրոնը Դիլիջան քաղաքում չունի դիտակայան, չի տեղադրում պասիվ նմուշառիչներ, հետևաբար մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ՊՈԱԿ-ում տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ ՊՈԱԿ պաշտոնական կայք էջից: Համաձայն որի, մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են

- Փոշի՝ 0.071 մգ/մ$^3$;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.006 մգ/մ$^3$;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.023 մգ/մ$^3$;
- Ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ$^3$:

Անմիջապես տեղանքում մթնոլորտաիյին օդի ֆոնային աղտոտվածության և աղմուկի մակարդակը պարզելու համար «Քոնսեկոարդ» ընկերության մասնագետների կողմից կատարվել են փոշու և աղմուկի գործիքային չափումներ:

Ծրագրի իրականացման շրջանակներում՝ փոշու և աղմուկի վերաբերյալ ելակետային տվյալների հավաքագրման գործիքային չափումները կատարվում են 1 կետում, որը գտնվում է նախատեսվող գործունեության տարածքում: Չափման կետը ընտրվել է առկա փաստաթղթերի և զգայուն ընկալիչների տեղակայման հիման վրա:

Ծրագրի իրականացման համար ելակետային գործիքային չափումների համար ընտրվել են հետևյալ կետը.

1. Նմուշառման կետ № 1 – 40°15'530"N, 44°38'520"E, գտնվում է տարածքի հյուսիս-արևմտյան մասում:

*Աղյուսակ 3.5. Չափման կետերի աշխարհագրական դիրքերը*

| **Նմուշառման կետ** | **GPS կոորդինատները** | **Մոտակա բնակավայրեր/ Բնակատեղիներ** | **Սարքի գտնվելու վայրը մոտակա բնակավայրից, մ** |
|---|---|---|---|
| N1 | 40°15'530"N, 44°38'520"E | Նոր գյուղ | Բնակավայրի սահմաններում |

<u>*Փոշու կոնցենտրացիաների չափումներ*</u>

Փոշու կոնցենտրացիաները չափվում են օդի որակի փորձարկման BR-Smart մոդելի գործիքով: Այս սարքը հագեցած է 2,5մկմ և 10մկմ չափերի ալիքներով՝ PM2.5 և PM10 չափելու համար:

Ստացված տվյալները վերլուծվում և համեմատվում են համապատասխան թույլատրելի կոնցենտրացիաների (ազգային և միջազգային ստանդարտներ) հետ:

Փոշու (PM2.5 և PM10) կոնցենտրացիայի չափումները իրականացվել են ցերեկային ժամերին:

*Աղյուսակ 3.6. Փոշու (PM 2,5) չափման կետերը և չափման արդյունքները (ելակետային)*

| Կետ № | PM2.5 փոշու փաստացի կոնցենտրացիան, մգ/մ$^3$ | Սահմանային թույլատրելի կոնցենտրացիան, մգ/մ$^3$ | | |
|---|---|---|---|---|
| | | Ազգային | | IFC ստանդարտներ |
| | Ելակետային արժեք | Առավելագույն արժեք | Օրական միջին | Օրական միջին |
| 1 | 0.002 | 0.16 | 0.035 | 0.025 |

*Աղյուսակ 3.7. Փոշու (PM 10) չափման կետերը և չափման արդյունքները (ելակետային)*

| Կետ № | PM10 փոշու փաստացի կոնցենտրացիան, մգ/մ$^3$ | Սահմանային թույլատրելի կոնցենտրացիան, մգ/մ$^3$ | | |
|---|---|---|---|---|
| | | Ազգային | | IFC ստանդարտներ |
| | Ելակետային արժեք | Առավելագույն արժեք | Օրական միջին | Օրական միջին |
| 1 | 0.004 | 0.3 | 0.06 | 0.05 |

### 3.6. Աղմուկ և թրթռում

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերով:

Որպես շենքերում փաստացի աղմուկի համապատասխանության մակարդակի որոշման չափանիշներ, օգտագործվում են համարժեք (միջին) և առավելագույն ձայնային մակարդակների նորմատիվային արժեքները

Աղմուկի առավելագույն թույլատրելի ցուցանիշները ըստ այդ բերված են Աղյուսակ 3.8. -ում:

*Աղյուսակ 3.7. ՀՀ սահմանված աղմուկի նորմերը Աղմուկի առավելագույն թույլատրելի մակարդակը*

| Ընկալիչ | Ժամերը | dBLAEQ | dBLAMAX |
|---|---|---|---|
| **Բնակելի և հասարակական շենքերի մոտ** | 07:00-23:00 | 55 | 70 |
| | 23:00-07:00 | 45 | 60 |

*Աղյուսակ 3.8. Լարվածության եվ ծանրության փարբեր կապեգորիաների աշխափանքային գործունեության աշխափափեղերում ձայնի սահմանային թույլափրելի մակարդակները եվ ձայնի սահմանային մակարդակները դԲա-ով*

| Աշխատանքային գործընթացի լարվածության կարգ | Աշխատանքային գործընթացի ծանրության կարգ | | | | |
|---|---|---|---|---|---|
| | թեթև ֆիզիկական ծանրաբեռն-վածություն | միջին ֆիզիկական ծանրաբեռն-վածություն | 1 աստիճանի ծանր աշխատանքի | 2 աստիճանի ծանր աշխատանքի | 3 աստիճանի ծանր աշխատանքի |
| **Թեթև աստիճանի լարվածություն** | 80 | 80 | 75 | 75 | 75 |
| **Միջին աստիճանի լարվածություն** | 70 | 70 | 65 | 65 | 65 |
| **Աշխատանքի 1 աստիճանի լարվածություն** | 60 | 60 | | | |
| **Աշխատանքի 2 աստիճանի լարվածություն** | 50 | 50 | | | |

Ներկայացվող տեղանքում աղմուկի և տատանումների աղբյուր կարող են հանդիսանալ շին.հրապարակում աշխատող շին.տեխնիկան, տարածք մուտք գործող և դուրս եկող ավտոտրանսպորտային միջոցները:

*<u>Աղմուկի մակարդակների չափումներ</u>*

Աղմուկի մակարդակի չափումները իրականացվում են ցերեկային ժամերին: Տեղում՝ գործիքային չափումների իրականացման արդյունքները ներկայացված են Աղյուսակ 3.9.-ում:

*Աղյուսակ 3.9. Աղմուկի չափման կետերը և չափման արդյունքները (ելակետային)*

<table>
<tr><td rowspan="3">Չափում №</td><td colspan="2">Ձայնի մակարդակներ, դԲԱ</td><td colspan="3">Սահմանային թույլատրելի արտանետումներ, դԲԱ</td></tr>
<tr><td rowspan="2">Ձայնի մակարդակին համարժեք, LAeq Ելակետային արժեք</td><td rowspan="2">Ձայնի առավելագույն մակարդակ, LAmax Ելակետային արժեք</td><td colspan="2">Ազգային</td><td rowspan="2">IFC ստանդարտներ գիշեր/ցերեկ</td></tr>
<tr><td>Ձայնի մակարդակին համարժեք</td><td>Ձայնի առավելագույն մակարդակ</td></tr>
<tr><td colspan="6">Կետ 1</td></tr>
<tr><td>1</td><td>49.5</td><td>60.5</td><td>55</td><td>70</td><td>45/55</td></tr>
</table>

### 3.7. Ջրային ռեսուրսներ

Տարածքի խոշորագույն ջրային երակը Հրազդան գետն է, որը հանրապետության խոշորագույն ու կարևորագույն գետերից է՝ Արաքսի ձախ վտակը: Ունի 141 կմ երկարություն: Ավազանի մակերեսը 2650կմ$^2$ է (առանց Սևանա լճի): Այն սկիզբ է առնում Սևանա լճից, հոսում հարավ-արևմտյան ընդհանուր ուղղությամբ, անցնում Գեղարքունիքի, Կոտայքի մարզերով, Երևան քաղաքով, Արարատի մարզով և թափվում Արաքսը: Վերին հոսանքում մոտ 20 կմ հոսում է դեպի արևմուտք՝ այդ ընթացքում առաջացնելով գալարներ, միջին հոսանքում անցնում է նեղ ու խոր (120-150մ) կիրճով, ստորին հոսանքում ուղղվում է դեպի հարավ-արևելք, դուրս գալիս Արարատյան դաշտ, դառնում հանդարտահոս ու ծովի մակարդակից 820 մ բարձրության վրա լցվում Արաքս գետը: Գետի ընդհանուր անկումը կազմում է 1100 մ: Սնումը հիմնականում ստորգետնյա (51%) և հալոցքային (37%) է, վարարումը՝ գարնանը, հորդացումները՝ ամռանն ու աշնանը:

Անհրաժեշտ է նշել, ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

2024 թվականի 1-ին եռամսյակում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է հանրապետության 51 գետի, Ախուրյանի, Երևանյան լիճ և Կեչուտի ջրամբարների, Արփա-Սևան ջրատարի և Սևանա լճի 14 դիտակետում: Ջրի որակը

բնութագրվում է ֆիզիկաքիմիական մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ)[2]:

***Հիդրոերկրաբանական տեսակետից*** տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Տեղամասում մինև 1 մետր խորությամբ փորված հետախուզահորերով գրունտային ջրերի հորիզոնը չի հատվել և ըստ ֆոնդային նյութերի դրանք գտնվում են 70 մետրից խորը հորիզոնում:Այսպիսով՝ տարածաշրջանում կատարված ինժեներաերկաբանական դիտարկումների համաձայն ստորերկրյա ջրերի հորիզոնները բացակայում են, որը հիմնականում պայմանավորված է տարածքի երկրաբանական և գեոմորֆոլոգիական առանձնահատկություններով:

**Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք**

*Հիդրոլոգիական դիտարկումներ*

Հրազդանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում, այդ թվում՝ 13 գետային, 2 ջրամբարային և մեկ 1 ջրանցքի:

Հրազդանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում:

Հրազդան գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև և Արզնի ՀԷԿ-ից վերև հատվածներում փետրվարին և մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Արգել գյուղից ներքև հատվածում ջրի որակը փետրվարին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «անբավարար» (4-րդ դաս):

*Նկար 5. Հրազդան գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները*




*Նկար 6.*

---

[2] http://www.armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/hydro/surface-1-2024.pdf

*ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը*




### 3.8. Հողային ռեսուրսներ

Տարածաշրջանում հիմնականում հանդիպում են շագանակագույն կամ բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած հողային տիպերը: Կարելի է առանձնացնել հողերի էրոզվածության 2 աստիճան, մի մասում դրանք 5-րդ կարգի են՝ 45-70%, որոշ մասերում՝ 6-րդ՝ 70%-ից ավել:

Անմիջապես աշխատանքների տեղամասերում հողային շերտը քարքարոտ է, տեղ-տեղ հանդիպում է հողի բերրի շերտ: Բերրի հողաշերտ հանդիպում է հողամասի մոտավորապես 2600 մ$^2$ տարածքի վրա, որը տատանվում է մոտավորապես՝ 15-20 սմ:

Ըստ նախնական հաշվարկների հողային աշխատանքների իրականացման փուլում հանվելու է մոտավորապես 5600 մ$^3$ , որից հանվող բերրի հողի ծավալը կկազմի 520 մ$^3$, այն ամբողջությամբ օգտագործվելու է տարածքի բարեկարգման և կանաչապատման համար:




*Նկար 7. Հողային տիպեր*

### 3.9. Կենսաբազմազանություն

*3.9.1. Բուսական աշխարհ*

Տարածաշրջանի բուսական աշխարհը ներկայացված է Գեղամա և Երևանյան ֆլորիստական շրջանների միջև ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային չոր տափաստանային զոնայի տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով, որոնցում գերակշռում են վաղամեռ /էֆեմեր/ բույսերը և ճիմ առաջացնող հացազգիները, մասնավորապես անապատասեզը, ցորնուկը, այծակնը, դաշտավլուկը: Այստեղ անդեզիտա-բազալտային և տուֆա-լավային մայր ապարների վրա տարածված տարալվացված շագանակագույն հողերի և ոռոգովի հանդամասերի վրա կարելի է հանդիպել մոտ 150 բուսատեսակ: Դրանցից որպես դոմինանտ կամ բնորոշ տեսակներ կարելի է նշել գարնան վերջերին փարթամ բուսածածկ առաջացնող էֆեմերներից առնասպարը /Androsace/, ճռճռուկը /Cerasfium/, եղջրագլխիկը /Ceratocephala sp./, սագասոխուկը /Gagea sp./, պապլորը /Muscari sp./, աստղաշուշանը /Ornithogalum sp./ և այլն: Ամռան շոգերի հետ այս բույսերը չոռոգվող հանդակներում ամբողջովին խանձվում են: Տիրապետող բույս է մնում հոտավետ օշինդրը /Artemisia sp./, որը սպիտակաթաղիք ցողուններով, չորասեր, կամֆորայի դուրեկան հոտով կիսաթուփ է: Սակայն օշինդրային բուսածածկույթը հիմնականում վերածվել են մշակովի դաշտերի և այգիների: Տարածված

բուսատեսակներից է նաև կապարը /Capparis spinosa/, կոխիան /Kohia sp./, նոնեան /Nonea sp./, լերդախոտ սովորականը /Teucrium chamaedrys/, բորբուսատեսուկը /Ceratoides sp./, դաշտավլուկը /Poa sp./, որոնք երբեմն առաջացնում են ինքնուրույն բուսական համակեցություններ:

Շրջակա բնակչության համար առանձնապես հետաքրքրություն է ներկայացնում վայրի ուտելի բույսերը՝ սիբեխ /Falcaria vulgaris/, թրթնջուկ /Rumex acetosella/, կապար /Caparis spinosa/, եղինջ /Utrica dioica L./, խատուտիկ /Taraxacum/, դանդուռ /Portulaca grandiflora/ և այլն: Տարածաշրջանում կան նաև դեղաբույսեր՝ կուսածաղիկ /Vinca her herbacea/, անթառամ /Helichrysum/, առյուծագի /Leonotis cardiaca/, լոշտակ /Bryonia alba/, հազարտերևուկ /Achillea/, սրոհունդ /Hypericum/, սպանդ /Peganun harmala/ և այլն: Կան նաև ներկատու, եթերայուղատու և համեմունքային բույսեր /ուրց և այլն/:

Նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքներն արդեն իսկ խախտված են և օգտագործվում են մարդու կողմից՝ առկա է տրանսպորտային միջոցների երթևեկություն և աղմուկ, բացի այդ տարածքը նախկինում պատկանել է «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն»-ին, որտեղ եղել է կենտրոնի լաբորատորիան, իսկ լաբորատորիա մասնաշենքի հետնամասում եղել են կենտրոնի անասնագոմերը,ինչի արդյունքնում ներկայացված բուսատեսակները, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները նախատեսվող գործունեության և դրան հարակից տարածքներում բացակայում են:

### *3.9.2. Կենդանական աշխարհ*

Կոտայքի մարզի կենդանական աշխարհը համեմատաբար ավելի աղքատիկ է: Կոտայքի մարզը տեղադիրքով Միջերկրածովյան կենսաշխարհագրական տարածաշրջանի Իրանական, Փոքրասիական ու Պոնտոս-կովկասյան խաչմերուկ է, որով և պայմանավորված է այդ աշխարհագրական շրջանների ազդեցությունը Հայաստանի և առանձին մարզերի կենդանական աշխարհի տեսակների վրա:

Կոտայքի մարզի կենդանական աշխարհին բնորոշ են հիմնականում լեռնատափաստանային կենդանատեսակները: Մարզի տարբեր շրջաններում հանդիպում են գայլ, աղվես, լուսան, կզաքիս, գորշուկ, նապաստակ և այլն: Մեծ է նաև օձերի տեսակների բազմազանությունը: Կոտայքի մարզի տարբեր գոտիներում հանդիպում են ինչպես անվտանգ, այնպես էլ թունավոր օձեր: Կոտայքի մարզի սողունների գլխավոր ներկայացուցիչներից է հայկական լեռնատափաստանային իժը, որն ապրում է մարզի լեռնային շրջաններում: Այս աշխարհագրական տեղամասում ապրում են նաև մի

շարք թռչուններ՝ ալպիական ճայ, կովկասյան մայրեհավ, տափաստանային արծիվ և այլն:[3] Տարածաշրջանում հանդիպում են Կարմիր գրքյան կենդանատեսակներից Կարելինի մռայլ արջաթիթեռ (Axiopoena karelini Menetries), որը բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի VU B 1ab(iii)+B 2ab(iii): Հայտնի է Երևան քաղաքից (Հրազդան գետի կիրճ, Կենդանաբանական այգի և այլն), Տավուշի (ք.Նոյեմբերյան), Կոտայքի (ք. Աբովյանի շրջակայք), Արարատի (Վեդի ք. մոտակայք) և Սյունիքի (ք. Մեղրի) մարզերից) և Ասիական լայնականջ չղջիկ (Barbastella leucomelas Gretzschmar), որը բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU Blab(iii): Հայաստանն այս սակավաթիվ տեսակի արեալի արևմտյան սահմանն է. ք. Երևանի շրջակայքը, Կոտայքի մարզ(Գառնի, Գեղարդ, Արզնի, Աբովյան), Վայոց ձորի մարզ (գգ. Արփի, Ելփին, Չիվա, Արենի, Հեր-հեր, Մարտիրոս և այլն), Սյունիքի մարզ (գգ. Խնձորեսկ, Նյուվադի, քք. Մեղրի և Գորիս), Տավուշի և Լոռու մարզեր):

Անմիջապես գործունեության տարածքում և մերձակայքում վայրի կենդանիների ապրելավայրեր չեն հայտնաբերվել, քանի որ գործունեությունն իրականացվելու է բնակավայրի տարածքում՝ ամբողջությամբ կառուցապատված և բնակեցված:

### 3.10. Բնության հատուկ պահպանվող տարածքներ և բնության հուշարձաններ

Հայաստանում կենսաբազմազանության պահպանումը, հիմնականում, իրականացվում է Բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ) (պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ), որտեղ կենտրոնացած է բուսական և կենդանական աշխարհի տեսակազմի մոտ 60%-ը, ներառյալ՝ հազվագյուտ, վտանգված, անհետացման եզրին հայտնված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը:

Ստորև ներկայացվում է ՀՀ Կոտայքի մարզում Բնության հուշարձանների ցանկ ըստ ՀՀ կառավարության 2008 թվականի 14 օգոստոսի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշմամբ հաստատված.

---

[3] Հայաստանի ազգային ատլաս, Հատոր Ա. Երևան 2007
https://hy.wikipedia.org/
Авагян А.В. Фауна и экология насекомоядных Армении. Автореф. к.б.н.  Ереван, 2010.

*Աղյուսակ 3.10. ՀՀ Կոտայքի մարզի բնության հուշարձանների ցանը*

| | |
|---|---|
| **Երկրաբանական** | |
| «Անանուն» խզվածքներ | Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից հվ, ավազահանքի մոտ |
| Թագավորանիստ խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտ | Կոտայքի մարզ, Եղվարդ քաղաքից 3.5 կմ դեպի հարավ |
| «Թագավորանիստ» խարամային կոն | Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից 3 կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում |
| «Պեռլիտե փիղ» քարե քանդակ | Կոտայքի մարզ, Չարենցավան քաղաքից 2 կմ հվ, քարահանքի մոտ |
| «Անանուն» բյուրեղային թերթաքարերի ու վերին կավճի կրաքարերի կոնտակտ | Կոտայքի մարզ, Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում |
| «Ծակ քար» բնական թունել | Կոտայքի մարզ, Բջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին |
| «Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտներ | Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում |
| «Անանուն» քարայր սյունաձև բազալտներում | Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1,0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում |
| «Անանուն» լանջային էրոզիա | Կոտայքի մարզ, Ազատ գետի աջակողմյան ափերին |
| «Անանուն» լավային ծալքեր | Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում |
| «Անանուն» խորշեր | Կոտայքի մարզ, Գողթ գյուղից մոտ 3.0 կմ հս-արլ |
| «Հատիս» հրաբուխ | Կոտայքի մարզ, Զովաշեն գյուղից 2.0 կմ արմ |
| «Ավազան» հրաբխային գմբեթ | Կոտայքի մարզ, Կարենիս գյուղից 1.5 կմ հս-արլ |
| «Կարենիս» հրաբխային գմբեթ | Կոտայքի մարզ, Կարենիս գյուղից 0.5 կմ հս-արլ |
| «Անանուն» ապարների բնորոշ մերկացում | Կոտայքի մարզ, Նուռնուս գյուղի և Արգելի ՀԷԿ-ի միջև |
| «Անանուն» օբսիդիանի ելքեր | Կոտայքի մարզ, Ջրաբեր գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, Երևան-Սևան խճուղու աջ կողմում |
| «Անանուն» քարե կուտակումներ | Կոտայքի մարզ, Քաղսի գյուղի հվ-արմ եզրին, Հրազդանի կիրճում |
| «Գութանասար» հրաբուխ | Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 3 կմ հվ |
| «Լեռնահովիտ» քարային կուտակումներ | Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 4-5 կմ հվ-արլ, «Թեզխարաբ» գյուղատեղիի մոտ |
| Ձորաղբյուրի (Մանգյուսի) բրածո ֆլորա | Կոտայքի մարզ, գյուղ Ձորաղբյուր |
| **Ջրաերկրաբանական** | |
| «Հաղպրտանք» աղբյուր | Կոտայքի մարզ, Հրազդան քաղաքի Վանատուր (Աթարբեկյան)թաղամասի արլ ծայրամասում, 1.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1755 մ բարձրության վրա |

| | |
|---|---|
| «Համով» աղբյուր | Կոտայքի մարզ, Ակունք գյուղի հվ-արմ ծայրամասում, եկեղեցու մոտ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա |
| «Քաղցր» աղբյուր | Կոտայքի մարզ, Արզնի գյուղից 150 մ հվ-արմ, Հրազդան գետի ձախ ափին, ծ.մ-ից 1300 մ բարձրության վրա |
| «Ձորի» աղբյուր | Կոտայքի մարզ, Գողթ գյուղից 0.3 կմ հս-արլ, Գողթ գետի աջ ափին, ծ.մ-ից 1580 մ բարձրության վրա |
| «Ավազան» աղբյուր | Կոտայքի մարզ, Կաթնաղբյուր գյուղից 0.3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա |
| **Ջրագրական** | |
| «Սագերի» լիճ | Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ հս |
| «Վիշապա» լիճ | Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ արլ |
| «Բազմալիճք» լիճ | Կոտայքի մարզ, Սևաբերդ գյուղից մոտ 3 կմ հս |
| «Լուսնալիճ» լիճ | Կոտայքի մարզ, Սևաբերդ գյուղից մոտ 7 կմ հս-արլ |
| **Բնապատմական** | |
| «Ողջաբերդ» բնապատմական համալիր | Կոտայքի մարզ, Ողջաբերդ գյուղի հս-արլ մասում |
| **Կենսաբանական** | |
| «Ռելիկտային կրկես Քյորօղլի լեռան մոտ» | Կոտայքի մարզ, Արտավազ գյուղի մոտ |
| «Ալպյան գորգ» | Կոտայքի մարզ, Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանա-պարհի ամենաբարձր մասում (Փամբակ լեռնաշղթայի Ամպա-սարի գագաթային մասում, ծ.մ-ից 300 մ բարձրության վրա) |
| «Թանթրվենի, Տիգրանի» | Կոտայքի մարզ, Արզնի առողջարանի մոտ, Հրազդան գետի ափին, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա |

Վերը նշված բնության հուշարձաններից որևէ մեկը որևէ առնչություն չունի նախատեսվող գործունեության տարածքի հետ:

Համաձայն ՀՀ կառավարության 25 սեպտեմբերի 2014 թվականի N 1059-Ա Կոտայքի մարզի տարածքում են գտնվում «Բանքսի սոճու», որի հեռավորությունը նախատեսվող գործունեության տարածքից գտնվում է մոտավորապես՝ 29,5կմ հեռավորոթյան վրա, «Արզական-Մեղրաձորի»՝ մոտավորապես՝ 29կմ, և «Հանքավանի ջրաբանական» արգելավայրերը՝ մոտավորապես՝ 47, 8 կմ:

Նախատեսվող գործունեության տարածքն անմիջական սահմաններ ԲՀՊՏ-ների հետ չունի: Հաշվի առնելով ԲՀՊՏ-ների հեռավորությունը տարածքից, կարելի է փաստել, որ նախատեսվող աշխատանքները որևէ բացասական ազդեցություն չեն ունենալու պետական արգելավայրերի վրա:

### 3.11. Պատմամշակութային միջավայր

Ստորև ներկայացնում է ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գյուղ բնակավայրի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 15 հուշարձան (11 միավոր):

| Հուշարձան | Կառուցված | վայր, հասցե |
|---|---|---|
| Ամրոց | Ք.ա. 2-1 հազ., ուշ միջնադար | գյուղից 1 կմ հս-ամ |
| Դամբարանադաշտ | Ք.ա. 2-1 հազ. | |
| Գերեզմանոց | 14-17 դդ. | գյուղի հվ-ամ եզրին, ճանապարհից ամ |
| Գերեզմանոց | 19 դ. | գյուղի հս եզրին |
| Գերեզմանոց | 19-20 դդ. | գյուղի աե եզրին |
| Խաչքար | 15-16 դդ. | |
| Գերեզմանոց | 17-19 դդ. | գյուղից 1 կմ հվ-ամ |
| Դամբարանադաշտ | Ք.ա. 3-2 հազ. | գյուղից 1,5-2 կմ աե |
| Եկեղեցի Սբ. Աստվածածին | 1886 թ. | գյուղի կենտրոնում |
| Զանգակատուն | 19 դ. | կից է եկեղեցուն հվ-ից |
| Խաչքար | 1886 թ. | ագուցված է եկեղեցու ամ մուտքին, որպես ճակատակալ քար |
| Ժայռապատկերներ | | Հրազդանի կիրճի ձախ ափին, ջրամբարի մոտ |
| Հուշակոթող Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին | 1978 թ. | գյուղի սկզբնամասում |
| Քարայր-կացարանների համալիր | քարի դար, միջնադար | Քաղպաշտպանության գնդի համալիրի տակ և նրանից աջ՝ Հրազդանի կիրճում |
| Քարայր-կացարանների համալիր | քարի դար, միջնադար | Հրազդանի կիրճի ձախափին, ջրամբարի մոտ |

Վերը նշված պատմության և մշակույթի հուշարձաններից որևէ մեկը չի առնչվում նախատեսվող գործունեության տարածքի հետ:

# 4. ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

## 4.1. Կոտայքի մարզ[4]

| | |
|---|---|
| Տարածքը | 2076 քառ. Կմ |
| ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը | 7 % |
| Համայնքներ, 2023թ. դրությամբ | 11 |
| Քաղաքներ | 7 |
| Գյուղեր | 61 |
| Բնակչության թվաքանակը 2023թ. տարեսկզբի դրությամբ | 253.8 հազ. Մարդ |
| այդ թվում՝ | |
| Քաղաքային | 137.4 հազ. Մարդ |
| Գյուղական | 116.4 հազ. Մարդ |
| ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը | 8.5 % |
| Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը | 54.1 % |
| Գյուղատնտեսական նշանակության հողեր | 153856.0 հա |
| այդ թվում՝ վարելահողեր | 36771.2 հա |

Կոտայքի մարզը գտնվում է ՀՀ տարածքի կենտրոնում և միակ մարզն է, որը միջպետական սահման չունի ՀՀ հարևան որևէ պետության հետ: Այն հարավարևմուտքից սահմանակից է մայրաքաղաքին, արևմուտքից՝ Արագածոտնի, հյուսիսից՝ Լոռու, հյուսիս-արևելքից՝ Տավուշի, արևելքից՝ Գեղարքունիքի և հարավից՝ Արարատի մարզերին:

2022թ.-ին մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 11.2 %,
- գյուղատնտեսություն 8.5 %,
- շինարարություն 12.8 %,
- մանրածախ առևտուր 4.8 %,
- ծառայություններ 3.1 %:

Կոտայքի մարզը համեմատաբար զարգացած ու բազմաճյուղ տնտեսություն ունեցող մարզերից է: Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողն արդյունաբերությունն է: Մարզը մեծ դեր ունի էներգետիկայի ոլորտում: Մարզի արդյունաբերության մյուս հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է:

Մարզի տարածքում են գործում հանրապետության 3 խոշոր թռչնաֆաբրիկաներ: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով: Մարզի տարածքի

[4] https://www.armstat.am/am

կենտրոնական մասով անցնում են երկրի համար առանցքային նշանակություն ունեցող Երևան–Հրազդան-Սևան ավտոմայրուղին և Երևան-Հրազդան-Իջևան երկաթգիծը:

*Ակունք համայնք*

Վարչական տարածք՝ 30284.03 հա
Մշտական բնակչություն՝ 10099 մարդ[5]

Ակունք բազմաբնակավայր համայնքը կազմավորվել է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ - 93-Ն օրենքի համաձայն:

Ակունք համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերն են՝ Ակունք, **Նոր Գյուղ**, Կոտայք, Կապուտան, Հատիս, Զովաշեն, Ձառ, Սևաբերդ գյուղերը:

Ակունք համայնքն իր վարչական սահմաններով սահմանակից է Չարենցավան, Գեղաշեն, Կամարիս, Կաթնաղբյուր, Արամուս, Մայակովսկի, Բալահովիտ, Աբովյան, Արզնի և Բյուրեղավան համայնքներին: Համայնքի կենտրոնը Ակունք գյուղն է:

ՀՀ Կոտայքի մարզի Ակունք գյուղը (Բաշ-գյուղ), գտնվում է Աբովյան քաղաքից 6կմ հս-արլ՝ Հատիս լեռան ստորոտին, ալիքավոր սարահարթի վրա:

Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1450մ բարձրության վրա:

Գյուղի հարավային կողմում գտնվում է Քառասուն աղբյուրները, որտեղից սկսվում է Երևանի հիմնական ջրմուղը:

Ակունք համայնքը գտնվում է Աբովյան քաղաքից 6 կմ հս-արլ, Հատիս լեռան ստորոտին, ալիքավոր լայն սարահարթի մայրաքաղաքից կազմում է 20կմ, մարզկենտրոնից 37.5 կմ: Համայնքը գտնվում է ծովի մակերևույթից 1350-2058մ բարձրության վրա:

*Նոր գյուղ*

Բնակչություն՝ 1783
Գյուղի մակերեսը - 2070հա[6]

Նոր Գյուղը, նախկին՝ Թազագյուղ, հիմնադրվել է 1828թ. ռուս-պարսկական պատերազմների ժամանակաշրջանում: Գյուղը գտնվում է մարզկենտրոնից 39 կմ հարավ-արևմուտք, Գետառ գետի աջափնյակում:

Նոր Գյուղ է վերանվանվել 1946 թ.-ի : Նոր Գյուղը գտնվում է Աբովյան քաղաքից 2,3 կմ արևելք՝ Կոտայք և Մայակովսկի գյուղերի միջակայքում՝ ծովի մակերևույթից 1431 - 1455 մետր բարձրությամբ լայնագոգ հարթության վրա:

---

[5] https://www.kotayk-akunk.am/
[6] http://kotayk.mtad.am/

Գյուղում կա մեկ միջնակարգ դպրոց, գյուղում է գտնվում 1828թ. կառուցված Մարիամ Աստվածածին եկեղեցին և Հայրենական Մեծ պատերազմի զոհվածների հիշատակին նվիրված հուշակոթող:

Բնակչությունը զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ:

# 5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

## 5.1. Ընդհանուր տեղեկատվություն

Տարածքը գտնվում է Կոտայքի մարզի Նոր Գյուղի 1-ին փողոց թիվ 7 հասցեում: Տարածքի նախկին նշանակությունը՝ «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն»: Տարածքը զբաղեցնում է 2.9383 հա տարածք, իր մեջ ընդգրկելով թվով 10 հասարակական և գյուղական նշանակության մասնաշենքեր:

Նախատեսվող գործնունեության տարածքը զբաղեցնում է **29 383 մ²**, որից ըստ նախագծի

- կառուցապատված է **6 275 մ² (21%)**,

- ավտոճանապարհներ **8 488 (29%)**,

- մայթեր **2 868 մ² (10%)**,

- կանաչապատ տարածքներ **11 752 (40%)**:

Նախատեսվում է կառուցել **398** բնակարաններ, **10** «Թաունհաուս» տիպի առանձնատներ, **160** ավտոկայանատեղի, **10** զրուցարաններ, **2** մանկական խաղահրապարակներ և **1** ունիվերսալ մարզադաշտ, ծառատունկ զբոսայգիներ, ծաղկանոցներ: Տարածքը ողջ սահմանագծով սահմանազատված է ծառուղիներով:

Շինարարությունը նախատեսվում է իրականացնել 2 փուլով: Շինարարության ժամկետը յուրաքանչյուր փուլի համար նախատեսվում է 2 տարի, ընդհանուր՝ 4 տարի ժամկետով:

***1-ին փուլ***

Ըստ նախագծի 1-ին փուլի համաար նախատեսված տարածքը կազմում է 1,63 հա կամ **16 300 մ²**, որից

- կառուցապատված տարածք՝ **3 597 մ² (22%)**,

- ավտոճանապարհներ՝ **4 583 մ² (28%)**,

- մայթեր՝ **1 600 (10%)**,

- կանաչապատ տարածքներ **6 520 մ² (40%)**:

1-ին փուլի համար հատկացված տարածքն իր մեջ ներառում է 5 մասնաշենք, որոնցից նախատեսվում է վերակառուցել 3 մասնաշենք, իսկ մյուս 2-ի տարածքն օգտագործել մարզադաշտի և մանկական խաղահրապարակի կառուցման համար:

Հիմնականում պահված են տարածքի ներքին ավտոճանապարհները, ավելացնելով մայթեր, կանաչապատ տարածքներ, զրուցարաններ՝ 6 միավոր և ավտոկանգառներ՝ 77 ավտոմեքենայի համար:

***<u>2-րդ փուլ</u>***

2-րդ փուլի զբացեցրած տարածքը կազմում է 1,3083 հա կամ **13 083 մ²** տարածք, որից

- կառուցապատված տարածք՝ **2 678 մ² (20%)**,

- ավտոճանապարհներ՝ **3 905 մ² (30%)**,

- մայթեր՝ **1 268 (10%)**,

- կանաչապատ տարածքներ **5 232 մ² (40%)**:

2-րդ փուլի համար նախատեսված տարածքն իր մեջ ընդգրկում է գոյություն ունեցող 5 մասնաշենքերը: Նախատեսվում է նշված մասնաշենքերից վերակառուցել միայն երկհարկանի մասնաշենքը, իսկ մյուս 4 մասաշենքերը ապամոնտաժել:

2-րդ փուլում նախատեսվում է կառուցել 2 հատ 8 հարկանի բնակելի շենք, բազմաֆունկցիոնալ երկհարկանի մասնաշենք, մանկական խաղահրապարակ, զրուցա-րաններ՝ 4 միավոր, ավտոկայանատեղեր՝ 83 (ստորգետնյա՝ 32 և վերգետնյա՝ 51) ավտոմեքենայի համար, սիզամարգեր, կանաչապատ, ծառատունկ տարածքներ:

Տարածքում կան մոտավորապես 13-16 ծառեր և 15-20 թփեր, ծառերի հիմնական մասը մրգատու ծառեր են, իսկ մնացածը վայրի փշատերևներ: Մի քանիսը գտնվում են անխնամ վիճակում, մի քանիսը չորացած և ենթակա են հատման: Հատված ծառերի փոխարեն նախատեսվում է տնկել թվով 268 ծառեր և թփեր, որոնք հարմար են տեղի լանդշաֆտին և բնակլիմայական պայմաններին, նախատեսվում է իրականացնել կանաչապատում սիզամարգի տեսքով, կառուցել 41մ² ընդհանուր մակերեսով ծաղկանոց (Կանաչապատման նախագիծը տես՝ Հավելված 4-ում):



*Նկար 8. Մասնաշենքերի արտաքին տեսքը*

### 5.2. Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ

Նախատեսվող գործունեության տարածքը զբաղեցնում է 29 383մ², շինարարությունը կիրականացվի 2 փուլով, յուրաքանչյուր փուլի տևողությունը՝ 2 տարի:

1-ին փուլի վերակառուցման տարածքը կազմում է  է 1.63 հա, իր մեջ ընդգրկելով 5 մասնաշենք, որոնցից նախատեսվում է վերակառուցել 3 մասնաշենք, իսկ մնացած 2-ի տարածքն օգտագործել որպես մարզադաշտ և մանկական խաղահրապարակ:

Հիմնականում պահված են տարածքի ներքին ավտոճանապարհները, ավելացնելով մայթեր, կանաչապատ տարածքներ, զբոսարաններ և ավտոկանգառներ:

*5 հարկանի մասնաշենք* – այս մասնաշենքը (15 x 97, 1մ առանցքային չափերով) քառահարկ նկուղային հարկով գոյություն ունեցող մասնաշենք է: Շենքին նախագծված է մանսարդային հարկ, իսկ նկուղային հարկը նախատեսված է որպես խորդանոցներ և տեխնիկական տարածքներ: Մասնաշենքի վերգետնյա 5 հարկերը կազմակերպված են 2 առանձին մուտքերով, որոնք ունեն աստիճանավանդակներ և վերելակներ: Յուրաքանչյուր մուտքը սպասարկում է 11-ական բնակարան, ընդամենը՝ հարկում 22 բնակարանի առկայություն, միջանցքի լայնությունը՝ 1.6մ:

Ամբողջ մասնաշենքում առկա է 110 բնակարան, որոնցից 2 սենյականոց՝ 50 միավոր, և 3 սենյականոց՝ 60 միավոր:

Նախատեսվում է կատարել շենքի արտաքին ջերմամեկուսացում և երեսապատել ֆիբրոցեմենտե սալիկներով, իսկ գետնախարիսխը երեսապատել բազալտե սալիկներով: Տանիքը նախատեսված է իրականացնել ծալքաթիթեղով:

*4 հարկանի մասնաշենք* - (15 x 30 մ առանցքային չափերով) մասնենք է, որին նախագծված է մանսարդային հարկ, յուրաքանչյուր հարկում նախատեսված է 8-ական բնակարան, ընդամենը՝ 32 բնակարանով, որից 2 սենյականոց՝ 24, և 3 սենյականոց՝ 8 հատ: Շենքը նույնպես նախատեսվում է ջերմամեկուսացնել և երեսապատել ֆիբրոցեմենտե սալիկներով:

*1 հարկանի մասնաշենք* - (15 x 83.8 մ առանցքային չափերով) մասնաշենք է, որ վերակառուցված է «Թաունհաուս» տիպի 10 առանձնատների: Շենքի աջ և ձախ կողմերին ավելացված են կցակառույցներ: Առանձնատները 2, 3, 4 և 5 սենյականոց են, յուրաքանչյուրը համապատասխան հողատարքներով:

Առանձնատների արտաքին պատերը նախատեսվում է ջերմամեկուսացնել, ներկել ճակատային դեկորատիվ ներկով, իսկ գետնախարիսխը և ճակատային որոշ մասեր երեսապատել բազալտե սալիկներով:

2-րդ փուլի համար նախատեսված տարածքը զբաղեցնում է 1,3083 հա տարածք և իր մեջ ընդգրկում է գոյություն ունեցող 5 մասնաշենքեր, որոնցից նախատեսվում է վերակառուցել միայն երկհարկանի մասնաշենքը, իսկ մյուս 4 մասաշենքերը ապամոնտաժել:

2-րդ փուլում նախատեսվում է կառուցել 2 հատ 8 հարկանի բնակելի շենք, բազմաֆունկցիոնալ երկհարկանի մասնաշենք, մանկական խաղահրապարակ, զբուցարաններ՝ 4 միավոր, ավտոկայանատեղեր՝ 83 (ստորգետնյա՝ 32 և վերգետնյա՝ 51) սիզամարգեր, կանաչապատ, ծառատունկ տարածքներ:

*8 հարկանի մասնաշենքեր* - 2 հատ միանման շենքեր են (15 x 60,6 մ առանցքային չափերով), ունեն ստորգետնյա մեկ և վերգետնյա 8 բնակելի հարկեր: Ստորգետնյա հարկը նախատեսված է ավտոկայանատեղի համար՝ 16 ավտոմեքենայի համար:

Մասնաշենքերը կազմակերպված են 2 առանձին մուտքերով, որոնք ունեն աստիճանավանդակներ և վերելակներ: Յուրաքանչյուր մուտքը սպասարկում է 8-ական բնակարան, կազմելով հարկում 16 բնակարան, ընդհանուր մեկ շենքում՝ 128 բնակարան, որից 2 սենյականոց՝ 96, և 3 սենյականոց՝ 32 հատ: Երկու մասնաշենքերում բնակարանների ընդհանուր թիվը կազմում է 256 միավոր:

*Բազմաֆունկցիոնալ մասնաշենք* - (15 x 60,6 մ առանցքային չափերով) այս մասնաշենքը գոյություն ունեցող մասնաշենքն է, գտնվում է տարածքի հարավային հատվածում, մայրուղուց 25 մ հեռավորության վրա: Նախատեսվում է մասնաշենքի առաջին հարկն օգտագործել, որպես սուպերմարկետ՝ համապատասխան ենթակառուցվածքներով, իսկ 2-րդ հարկը, որպես արագ սննդի կետ: Կառույցը կունենա բավարար բացօդյա ավտոկայանատեղեր:

2-րդ փուլում կառուցվող մասնաշենքերն իրենց ճարտարապետական լուծումներով համահունչ կլինեն առաջին փուլում կառուցվող մասնաշենքերին, կլրացնեն մեկը մյուսին և կկազմեն մեկ ամբողջություն:

### 5.3. Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներ

Թաղամասի տեխնիկական և տնտեսական ցուցանիշները

- Հողամասի մակերեսը՝ **29 383 մ²**
- Կառուցապատված մակերեսը՝ **6 275 մ² - 21%**
- Ավտոճանապարհ՝ **8 488 մ² - 29%**
- Մայթ՝ **2 868 մ² - 10 %**
- Կանաչապատման տարածք՝ **11 752 մ² - 40%:**

- ✓ Բնակարններ – **398 հատ**
- ✓ Առանձնատներ – **10 հատ**
- ✓ Ջրուցարաններ – **10 հատ**
- ✓ Ավտոկայանատեղեր – **160 տեղ**:

Նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Կանաչապատման մակերեսը կկազմի ընդհանուր հողամասի 40%-ը / 11 752 մ²/:

Կանաչապատումն իրականացվելու է համաձայն ՀՀ կառավարության N108-Ն որոշման, և ներառելու է՝ սիզամարգի տեսքով աշխատանքներ և ծառատունկ: Դեկորատիվ տեսք ապահովելու նպատակով կանաչապատման համար օգտագործվելու է տեղի լանդշաֆտին և բնակլիմայական պայմաններին համապատասխան ծառատեսակներ, տես՝ Հավելված 4: Ծառերի կպչողականությունն ապահովվելու է պարտադիր ոռոգման և խնամքի պայմաններում:

Ոռոգումն իրականացվելու է ոռոգման ցանցի միջոցով, որը ենթակա է վերանորոգման, այն կմիանա տարածքում գործող ոռոգման ցանցին:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի շինարարական թափոնները և շինաղբը, մոտավորապես՝ 80-90 տոննա, որը Ակունքի համայնքապետարանի հետ համաձայնեցված տեղափոխվելու կամ տեղադրվելու են համապատասխան աղբավայրերում: Համապատասխան պայմանագիր կկնքվի դրական փորձաքննական եզրակացություն ստանալուց հետո:




*Նկար 9. Գլխավոր հատակագիծ*

# ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:400

ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ






ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾ

## ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

1. 5 ՀԱՐԿԱՆԻ ՄԱՍՆԱՇԵՆՔ. 110 ԲՆ.
2. 4 ՀԱՐԿԱՆԻ ՄԱՍՆԱՇԵՆՔ. 32 ԲՆ.
3. 1 ՀԱՐԿԱՆԻ ՄԱՍՆԱՇԵՆՔ. 10 ՏՈՒՆ
4. ՄԱՐԶԱԴԱՇՏ
5. ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿ
6. ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ
7. ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ
8. ԱՂԲԱՄԱՆՆԵՐ
9. ԷԼԵԿՏՐԱԵՆԹԱԿԱՅԱՆ
10. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ

| | | |
|---|---|---|
| (կարմիր եզրագիծ) | ԸՆԴՀ. ՏԱՐԱԾՔԸ | 1,63 ՀԱ |
| (սպիտակ) | ԿԱՌՈՒՑԱՊԱՏՎԱԾ | 3597.0 Մ²; 22% |
| (բաց մոխրագույն) | ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀ | 4583.0 Մ²; 28% |
| (մոխրագույն) | ՄԱՅԹ | 1600.0 Մ²; 10% |
| (կանաչ) | ԿԱՆԱՉԱՊԱՏ | 6520.0 Մ²; 40% |

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ 142 ՀԱՏ
ԱՌԱՆՁՆԱՏՆԵՐ 10 ՀԱՏ
ԱՂԲԱՄԱՆՆԵՐ 6 ՀԱՏ
ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐ 77 ՏԵՂ

| | |
|---|---|
| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | «ՀԱՏՇԻՆ ՔՈՆՍՏՐԱՔԹ» ՍՊԸ |
| ՆԱԽԱԳԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ԲՆԱԿԵԼԻ ԹԱՂԱՄԱՍԻ |
| ԳԾԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | |
| ԳԾԱԳԻՐ | |
| ՄԱՍՇՏԱԲ | 1:400 |
| ԿԱՏԱՐՈՂ ԲԱԺՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՊՈՐՏԱԼ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԱՆՈՑ |
| ՆԳՃ | Ս. ԱՍՐՅԱՆ |

4

## ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:500

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ




ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

1. 8 ՀԱՐԿԱՆԻ ՄԱՍՆԱՇԵՆՔ. 128 ԲՆ.
2. 8 ՀԱՐԿԱՆԻ ՄԱՍՆԱՇԵՆՔ. 128 ԲՆ
3. ՍՈՒՊԵՐՄԱՐԿԵՏ, ԱՐԱԳ ՍՆՆԴԻ ԿԵՏ
4. ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐ
5. ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿ
6. ՆԵՐՔԻՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ
7. ԿԱՆԱՉԱՊԱՏ ՏԱՐԱԾՔ
8. ՋՐՈՒՅՑԱՐԱՆՆԵՐ
9. ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
10. ԳԼԽԱՎՈՐ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ

| | |
|---|---|
| ԸՆԴՀ. ՏԱՐԱԾՔԸ | 1,3083 ՀԱ |
| ԿԱՌՈՒՑԱՊԱՏՎԱԾ | 2678.0 Մ²; 20% |
| ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀ | 3905.0 Մ²; 30% |
| ՄԱՅԹ | 1268.0 Մ²; 10% |
| ԿԱՆԱՉԱՊԱՏ | 5232.0 Մ²; 40% |

| | |
|---|---|
| ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ | 256 ՀԱՏ |
| ՋՐՈՒՅՑԱՐԱՆՆԵՐ | 4 ՀԱՏ |
| ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐ | 83 ՏԵՂ |

Portal
ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱՏՇԻՆ ՔՈՆՍՏՐԱՔԹ» ՍՊԸ

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ԲՆԱԿԵԼԻ ԹԱՂԱՄԱՍԻ

| ՓՈՒԼ | ՄԱՍ | ԱԼԲՈՄ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
|---|---|---|---|---|
| ԱՆ | 6 | 2 | Ճ 37 | |

ԳԾԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

| | |
|---|---|
| ԳԾԱԳԻՐ | |
| ՄԱՍՇՏԱԲ | |

ԿԱՏԱՐՈՂ ԲԱԺՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ
ՊՈՐՏԱԼ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԱՆՈՑ

| | | |
|---|---|---|
| ՆԳՃ | | Ս. ԱՍՐՅԱՆ |
| ՆԳԿ | | Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ՆԱԽԱԳԾԵՑ | | |

37

## 5.4. Նախապատրաստական աշխատանքներ

Շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ նախապատրաստական աշխատանքները՝

- ժամանակավոր ցանկապատման իրականացում,
- պահեստային հարթակների կարգավորում,
- ժամանակավոր տնակների տեղադրում,
- ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում,
- ջրի պահեստային բաքի տեղադրում,
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ,

*Շինհրապարակի կազմակերպման ընդհանուր սխեմա.*

- ժամանակավոր էլեկտրամատակարարում և ջրամատակարարում
- շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- շին. հրապարակի գիշերային լուսավորվածություն,
- մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ,
- անվտանգության նշանների տեղադրում,
- հակահրդեհային միջոցների տեղադրում:

Ապրանքային բետոնը շին.հրապարակ է բերվում պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով՝ ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից: Ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում:

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով շին. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակումը հետևում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Շինհրապարակում կարևորվում են հետևյալ միջոցառումների կատարումը:

–Շինարարության ընթացքում անհրաժեշտ մնացած նյութատեխնիկական ռեսուրսների մատակարարումը կիրականացվի լիցենզավորված կազմակերպություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից:

–Համապատասխան մակնիշի բետոնախառնուրդի առաքումը դեպի հրապարակ կիրականացվի բետոնախառնիչիներով՝ կապալառուի հետ պայմանագրային հիմունքներով և համապատասխան առաքման հաճախականությամբ՝ ապահովելով

աշխատանքների կատարման անընդհատությունը: Այսպիսով՝ կբացառվի հրապարակում բետոնաշաղախային խառնուրդի պատրաստման գործընթացը:

–Հրապարակում սորուն նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) ժամանակավոր կպահվեն պաստառներով ծածկված վիճակում, շինարարական կոնստրուկցիաները (ամրաններ և այլն) հողային շերտից բարձր և ծածկերի տակ՝ բացառելու համար արտաքին միջավայրի ազդեցությունները՝ հաշվի առնելով վերջիններիս վարքի կոռոզիոն առանձնահատկությունները, իսկ մնացած շինարարական նյութերի պահպանումը հրապարակում կիրականացվի նորմատիվատեխնիկական պահանջներին համապատասխան:

## 5.5. Շինարարական աշխատանքներ

### *5.5.1. Ընդհանուր դրույթներ*

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը: Շինարարության տևողությունը կազմում է մոտավորապես 4 տարի՝ յուրաքանչյուր փուլի համար 2 տարի, շինարարության թույլտվության տրամադրման օրվանից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում՝ դրանք վարձակալել այլ կազմակերպություններից:

Շինարարության ընթացքում բանվորները կսնվեն հատուկ ճաշարան-տնակում: Շինարարական աշխատանքների տարբեր փուլերում կներգրավվեն տվյալ աշխատանքային ծավալների համար համապատասխան թվով բանվորներ, առավելագույնը շին աշխատանքներում միաժամանակ ներգրավված կլինեն մոտավորապես 60 աշխատակից:

Շինարարությունը իրականացվելու է հետևյալ մեքենա–մեխանիզմներով՝

---

- Բեռնատար մեքենաներ՝ 2 - 4
- Ավտոկռունկ՝ 1 - 2
- Էքսկավատոր՝ 1
- Բուլդոզեր՝ 1
- Ջրցան մեքենա՝ 1
- Բետոնատար մեքնեա՝ 1:

---

Ապրանքային բետոնը շին. հրապարակ է բերվում պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից: Ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում:

Շինարարական հրապարակում չի նախատեսվում շինանյութերի կամ սորուն նյութերի երկարաժամկետ պահեստավորում:

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով շին. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Տարածքում թույլ չտալ նորմայից ավել վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. հրապարակը պետք է լքեն մաքուր վիճակով: Բնահողով բարձված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով՝ թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ: Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը: Պարբերաբար, և ըստ անհրաժեշտության, կկազմակերպվի շինարարական աղբի տեղափոխում:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառվել են ՇՄԱԳՀ հաջորդ բաժիններում՝ բնապահպանական միջոցառումների ծրագրում և բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:




*Նկար 10. Շինարարության կազմակերպման հատակագիծ*

*Հողային աշխատանքներ*

Շինարարության ընթացքում մշակման ենթակա գրունտերը համաձայն ինժեներաերկրաբանական հետազոտության պատկանում են III, IV կարգի:

Բնահողի տեղափոխման համար ընտրված է ավտոինքնաթափ 7.5տ բեռնունակությամբ:

Հետլիցքի իրականացման համար օգտագործվում են գրունտի փափուկ բնահողերը:

Հիմքերի, հարթակների և հատակների հետլիցքը իրականացվում է բանվորական ուժի օգնությամբ, տեղափոխելով գրունտը սայլակներով մոտ 5-20մ:

Հետլիցքը նախատեսվում է խտացնել ձեռքի պնեվմատոփիչներով:

### 5.6. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Բնակելի թաղամասի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ խմելու-կենցաղային, շինարարության ընթացքում շինիրապարակների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար: Շինարարության փուլի ջրամատակարարումն իրականացվելու է պայմանագրային եղանակով՝ «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերության հետ կնքված պայմանագրի հիման վրա, գոյություն ունեցող ջրատարից (տես՝ Հավելված 5):

Սպասարկող անձնակազմը օգտվելու է տարածքում տեղադրված վագոն-տնակներից:

Շինարարության ընթացքում կոյուղին մեկ կետով միացված կլինի գյուղում գործող կոյուղատարին: Միացումը կիրականացվի առաջնահերթ:

Շինարարության տևողությունը կազմում է 4 տարի:

Ջրցանն իրականացվում է տարվա չոր և արևոտ եղանակին, այդ օրերի թիվը տարվա մեջ ընդունվում է 180 օր /4 տարվա ընթացքում այդ օրերի թիվը կկազմի 720 օր/:

Շինարարական աշխատանքները նախատեսվում են իրականացնել շաբաթական 6 օրյա գրաֆիկով, 8 ժամ տևողությամբ:

Ջրցանի օրական ջրապահանջը կկազմի՝

$$W = S_1 \times T_1 \times K_1 \times T_2$$

Որտեղ՝

$S_1$ – ջրցանվող տարածքի մակերես՝ 3 600 մ$^2$,

$T_1$ – ջրցանման նորման՝ 0.0015 մ$^3$

$K_1$ - ջրցանի /չոր եղանակի/ տարեկան օրերը՝ 720 օր
$T_2$ – օրական ջրցանի թիվը՝ 2

$$W = 3\ 600\ մ^2 \times 0.0015 \times 720 \times 2 = 7\ 776\ մ^3\ /տարի:$$

Միջին օրականը՝ 10.8 $մ^3$:

<u>դ. Խմելու-տնտեսական կարիքներ</u>

Աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսի հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{խ.} = (n_1 \times N_1 + n_2 \times N_2) \times T,$$

որտեղ

$n_1$ – ԻՏԱ թվաքանակն է՝ 7 մարդ
**$N_1$**– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 $մ^3$օր/մարդ
$n_2$ – բանվորների թվաքանակն է՝ 53 մարդ
**N**– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 $մ^3$օր/մարդ
**T** - աշխատանքային օրերի թիվն է ամբողջ շին ընթացքում՝ 1 248 օր

$$W_{խ.} = (7 \times 0.016 + 53 \times 0.025) \times 1\ 248 = 1\ 794\ մ^3/տարի$$

Օրական՝ 1.437 $մ^3$/օր

## 6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 6.1. Բնապահպանական ռիսկեր

Շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունը բացահայտելու, վերլուծելու և գնահատելու նպատակով անհրաժեշտ է նույնականացնել բոլոր այն գործընթացները, սարքավորումները, օգտագործվող նյութերն ու ռեսուրսները, որոնք յուրաքանչյուրն առանձին կամ որաշակի զուգակցմամբ կարող են առաջացնել օդային և ջրային ավազաններ վնասակար նյութերի արտանետումներ և արտահոսքեր, վտանգավոր թափոններ, ինչպես նաև ազդել տարածաշրջանի հողաածածկի վրա:

Մթնոլորտային արտանետումներ կառաջանան աշխատանքային նախագծի իրականացման վերակառուցման և նոր շենքերի կառուցման փուլում:

Արտանետումները ներառում են փոշու, շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում դիզ. վառելիքի այրման արգասիքները:

Փոշու կարճաժամկետ արտանետումներ կառաջանան շինարարության աշխատանքների ժամանակ, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ մթնոլորտային օդի որակի վրա և հարակից թաղամասերի վրա:

Շինարարական աշխատանքների ժամանակ մեքենաներում վառելիքի այրման արգասիքները որոշակի ազդեցություն կունենան տվյալ տեղանքի մթնոլորտային օդի որակի վրա, չնայած, այդ ազդեցությունն այնքան քիչ կլինի, որ հնարավոր չի լինի այն բացահայտել: Բացի այդ վերջիններս կկրեն ժամանակավոր բնույթ: Ազդեցությունները իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճատև, և պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքներով: Օդի նշանակալի աղտոտում չի սպասվում, եթե շինարարության պատշաճ գործելակերպ և սարքավորում կիրառվի:

Ջրային ռեսուրսների վրա ազդեցություն չի նախատեսվում, քանի որ աղտոտված արտահոսք չի լինելու, տարածքի հողածածկը և բուսածածկը չեն վնասվի հողային աշխատանքների ժամանակ, քանի որ հողային աշխատանքներ իրականացվելու է միայն նոր կառուցվող շենքների հիմքերի փորման ընթացքում:

Թափոններ կառաջանան շինարարական տեղնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործման, շինանյութերի օգտագործման ընթացքում:

Աղմուկի մակարդակը կավելանա շինարարական տեխնիկայի աշխատանքի ընթացքում:

### 6.1. Օդային ավազան

Նախատեսվող գործունեության հետ կապված աշխատանքներն ուղեկցվում են օդի աղտոտմամբ՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք առաջանում են նոր շենքերի կառուցման հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի այրման դեպքում:

Դիզելային վառելիքի այրմամբ պայմանավորված մթնոլորտային օդի վրա բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով նախատեսվում է շահագործել այնպիսի տրանսպորտային և տեխնիկական միջոցներ, որոնք հագեցած են կատալիտիկ չեզոքացուցիչներով (կատալիզատորներով):

Շինարարության ընթացքում դիզելային վառելիքի այրմամբ պայմանավորված արտանետումներ առաջանում են միայն շինհրապարակի ներսում տեխնիկական

միջոցների աշխատանքի ընթացքում՝ շարժական աղբյուրներից: Արտանետումները կրում են ժամանակավոր բնույթ և էական ազդեցություն մթնոլորտային օդի աղտոտվածության վրա չեն ունենալու: Քանի որ շինարարական թափոններ և շինանյութեր տեղափոխող մեքենաների համար կսահմանվեն երթեր /մեքենաները դուրս կգան սահմանված ժամանակացույցով/, ապա շինհրապարակից դուրս օդի աղտոտվածության շոշափելի ավելացում չի լինի:

***ա) Հողային աշխապանքներ***

Շինարարական աշխատանքներն իրականացվելու են երկու փուլով և տևելու են 48 ամիս (4 տարի): Հողային աշխատանքներն իրականացվելու են հիմնականումն 2-րդ փուլի ընթացքում, որից բուն հողային աշխատանքները՝ 4 ամիս:

Աշխատանքներն իրականացվելու են մեկ հերթափոխով՝ ժամը 9.00-18.00, շաբաթը 6 օր,8 ժամյա ռեժիմով: Շին.հրապարակում աշխատելու է 60 մարդ, որից ինժեներական կազմը՝ 7 մարդ:

Հողային աշխատանքների իրականացման փուլում հանվելու է 5600 $մ^3$ կամ 8960 տոննա հողային զանգված (տեսակարար կշիռն ընդունվել է 1.6), որից 3250 $մ^3$ կամ 5200 տոննան օգտագործվելու է որպես հետլիցք, իսկ մնացած՝ 2350 $մ^3$ կամ 3760 (տոննա) մասը համայնքապետարանի թույլտվությամբ կտեղափոխվի հատուկ հատկացված վայր:

Հողային աշխատանքների՝ հիմքերի փորման, հողի բեռնման և տեղափոխման ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները հաշվարկվել է ստորև բերված բանաձևով[7]:

$$Q = K_1 \times K_2 \times K_3 \times K_4 \times K_5 \times K_7 \times B \times G \quad տ/տարի,$$

[7] **Методика расчета выбросов загрязняющих веществ в атмосферу от предприятий по производству строительных материалов. Казахстан 2008**

*Աղյուսակ 5.1. Հողային աշխապտանքների ժամանակ մթնոլորփ արփանեփվող վնասակար նյութերի հաշվարկը*

| Ցուցանիշի անվանումը | Հանույթի և բեռնվող նյութերի քանակը, G, տ | Ֆրակցիայի բաժնեմասը, $K_1$ | Աէրոզոլի փոխանցվող փոշու բաժնեմասը, $K_2$ | Տեղանքի կլիմայական պայմանները հաշվի առնող գործակիցը, $K_3$ | Տեղանքի պայմանները հաշվի առնող գործակից, $K_4$ | Նյութի խոնավությունը հաշվի առնող գործակից, $K_5$ | Նյութի խոշորությունը հաշվի առնող գործակից, $K_7$ | Թափման բարձրությունը հաշվի առնող գործակից, B | Փոշու արտանետումների հաշվման բանաձևը տ/շ ժամ $A=G*k_1*k_2*k_3*k_4*k_5*k_7*B$ | Ընդամենը փոշի |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. Գրունտի հանում | 8960 | 0,05 | 0,02 | 1 | 1 | 0,4 | 0,4 | 0,5 | 0.717 | 1,497 |
| 2. Հետլիցք | 5200 | 0,05 | 0,02 | 1 | 1 | 0,6 | 0,5 | 0,5 | 0.780 | |

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները նվազենելու համար կիրականցվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի շին հրապարակը լքող մեքենաների անվադողերի լվացում:

### *բ) Դիզելային վառելիք այրման արգասիքներ*

Դիզ.վառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվում են “Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման” մեթոդական հրահանգի[8] հիման վրա:

Ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի տեսակարար արտանետումները բերված են ստորև:

[8] Մեթոդիկայում ընդունված է տրանսպորտային միջոցների դասակարգումը “Քոռ ինվեստորի օֆ եմմիշոնս ին Երոփ” (այսուհետ՝ CORINAIR)՝ “Եվրոպայում մթնոլորտային արտանետումների բազային գույքագրում” մեթոդոլոգիային համապատասխան

*Աղյուսակ 5.2. Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)*

| Վառելիքի տեսակը | Նյութի անվանումը | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Nox | CH | ՑՕՄ | CO | $N_2O$ | $CO_2$ | ՊՄ |
| Դիզելային վառելիք | 42.3 | 0.243 | 8.16 | 36.4 | 0.122 | 3138 | 4.3 |

Դիզվառելիքի տարեկան առավելագույն ծախսը կկազմի՝ 7.8 տ/տարի:

Վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումների հաշվարկը բերված է ստորև: Հաշվարկում միավորվել են ածխաջրածինները և ազոտի օքսիդները:

*Աղյուսակ 5.3. Շին. տեխնիկայից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկը*

| Ավտոմեքենայի կատեգորիան | Վնասակար նյութը | Տեսակարար արտանետումները, գ/կգ | Արտանե-տումները, գ/վրկ | Արտանետումները, տ/շին. ժամ. |
|---|---|---|---|---|
| Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ | CO | 36.4 | 0.0316 | 0,2839 |
| | CH | 8.4 | 0.0073 | 0,0655 |
| | Nox | 42.3 | 0.0367 | 0,3299 |
| | ՊՄ | 4.3 | 0.0037 | 0,0335 |

<u>*Ծծմբային անհիդրիդ*</u>

Ծծմբային անհիդրիդի ($SO_2$) արտանետումները հաշվարկվում են ելնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է $SO_2$-ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

$E_{SO2} = 2\Sigma ksb$, որտեղ՝

ks-ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է՝ 0.002 տ/տ

b –ն վառելիքի ծախսն է՝ 7,8 տ/տարի

$SO_2$ = 2 x 7,8 x 0.002 = 0.0312 տ/տարի կամ 0.0069գ/վրկ:

Արտանետումների ամփոփ քանակները բերված են ստորև աղյուսակում:

*Աղյուսակ 5.4. Արտանետումների քանակները*

| Աշխատանքների անվանումը | Վնասակար նյութերի անվանումը և քանակը, տ/շին.ժամ | | | | | | Ընդամենը տ/շին.ժամ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Փոշի | Ածխածնի օքսիդ | Ածխաջրածիններ | Ազոտի օքսիդներ | Մուր | Ծծմբային անհիդրի | |
| գրունտի հանում և հետլիցք | 1.497 | | | | | | 1.497 |
| Շինարարական տեխնիկայի և ավտոմեքենաների աշխատանքներ | | 0.2839 | 0.0655 | 0.3299 | 0.0335 | 0.0312 | 0.7441 |
| ***Ընդամենը*** | ***1.4968*** | ***0.2839*** | ***0.0655*** | ***0.3299*** | ***0.0335*** | ***0.0312*** | ***2.2409*** |

### 6.2. Աղմուկի մակարդակը

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր: Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության ընթացքում բուլդոզերը և էկսկավատորը:

Վերոնշյալ տեխինակենրը միաժամանակ չեն շահագործվում: Աղմուկի աղբյուրները կրում են ժամանակավոր բնույթ:

Բուլդոզերը և էկսկավատորը աշխատելու են շինարարության 2-րդ փուլում՝ հողային աշխատանքների (գրունտի փորում, հանում, հետլիցք և այլն) իրականացման ժամանակ 4 ամիս, աղմուկի մակարդակը՝ $LA_{էկվ}$, կազմում է 85 դԲ:

Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերի:

Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը՝≤ 200 կգ/մ$^2$:

Շինության պատերը հանդիսանում են միաժամանակ նաև աղմուկից պաշտպանիչ էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևալ բանաձևով.

$$I_{աղ} = 23 \lg m_{է} - 10 \text{ դԲ, երբ } m \geq 200 \text{ կգ/մ}^2 \text{ [15]}$$

$$I_{աղ} = 13 \lg m_{է} - 13 \text{ դԲ, երբ } m \leq 200 \text{ կգ/մ}^2,$$

Որտեղ $m_{է} = Km$ – մակերեսի խտության էկվիվալենտն է,

m – մակերեսի խտությունն է՝ 200 կգ/մ$^2$,

K –գործակից է, որը հաշվի է առնում պատնեշի խտությունը և ընդունվում է 1,3

$$m_{է}= 1,3 \times 200=260$$

$$L_{աղ} = 13\lg m_{է} -13 = 18,4 \text{ դԲ}$$

Էքսկավատորի և բուլդոզերի աղմուկի մակարդակը կկազմի՝

$$LA_{տար} = LA_{էկվ} - L_{աղ} = 85– 18,4 = 66,6 \text{ դԲ}$$

Հարակից բնակելի շինությունների պատերը, պատուհանները, մուտքի դռները, տանիքը, կանաչապատ տարածքը հադիսանում են որպես պաշպանիչ էկրան:

Ձայնամեկուսացումը RԱտ ր ըստ աղույսակ 2 ՝ կազմում է միջնը 50 դԲ:

$$LA_{տար} = 66,6 – 50 = 16,6 \text{ դԲ}$$

Մոտակա բնակելի շինությանների ներսում աղմուկի մակարդակը էքսկավատորի և բուլդոզերի աշխատանքի դեպքում կկազմի 16,6 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է: Աշխատանքներն իրակացվելու են միայն ցերեկային ժամերին:

### 6.3. Թրթռում

Թրթռման նորմաները բնակելի շենքերում, ըստ ՀՀ առողջապանության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, բերված են աղյուսակ 6.3.

Հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները

Աղյուսակ 6.3.

| Միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտեր, Հց | Թույլատրելի արժեքները $X_0$, $Y_0$ և $Z_0$ առանցքներով | | | |
|---|---|---|---|---|
| | Թրթռա արագացում | | Թրթռա արագություն | |
| | մ/վրկ2 .$10^{-3}$ | դԲ | մ/վ .$10^{-3}$ | դԲ |
| 2 | 10,0 | 80 | 0,79 | 84 |
| 4 | 11,0 | 81 | 0,45 | 79 |
| 8 | 14,0 | 83 | 0,28 | 75 |
| 16 | 28,0 | 89 | 0,28 | 75 |
| 31,5 | 56,0 | 95 | 0,28 | 75 |
| 63 | 110,0 | 101 | 0,28 | 75 |
| Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները | 10 | 80 | 0,28 | 75 |
| 1. Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում -10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով: 2. Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահներիհամար մտցվում է ուղղում -3դԲ: | | | | |

Շինարարության ընթացքում թրթռման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատաքը, որի թրթռման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում ալիքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

### *6.4. Ջրային ռեսուրսներ*

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, հանված հողային զանգվածի խոնավացման, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

### *6.5. Հողային ռեսուրսներ*

Հողային աշխատանքների ընթացքում հանվելու է բերրի հողաշերտը և պահպանվելու գործող նորմերին համապատասխան:

Նախատեսվող գործունեության տարածքում հողային ծածկույթի վրա բացասական ազդեցություններ չեն նախատեսվում, քանզի բուսաշերտը և հողի բերրի շերտի ամբողջ զանգվածը հանվելու է միայն նոր մասնաշենքների կառուցման վայրից:

Հողային աշխատանքներ իրականացվելու են շինարարության 2-րդ փուլերում: Հողի բերրի շերտի հանումը և հանված բերրի շերտի պահպանումն ու օգտագործումը կիրականացվի համաձայն ՀՀ կառավարության 2017թ. նոյեմբերի 2-ի N 1404-Ն որոշման:

Ըստ նախնական հետազոտության աշխատանքների իրականացման տեղամասերից կկտրվի և կիհանվի մոտավորապես 520 մ$^3$ բուսահող: Բուսահողը կպահեստավորվի հատուկ տարածքում՝ պաշտպանված մթնոլորտային տեղումներից և այլ գոծոնների ուղղակի ազդեցությունից, որը հետագայում կօգտագործվի տարածքի բարեկարգման և կանաչապատման համար:

### **6.6. Թափոնների կառավարում**

Նախատեսվող գործունեության ընթացքում կառաջանան շինարարական թափոններ և կենցաղային աղբ, որոնք սահմանված կարգով նախատեսված են տեղափոխել Ակունքի համայքնապետարանի կողմից տրամադրված համապատասխան աղբավայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու է ընդհանուր բնույթի շինարարական աղբ, որը ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006թ. №430-Ն հրամանով հաստատված «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկ»-ում և ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006թ. N342-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկ»-ում չի դասակարգվում, առավել մոտ է՝ 9120060101004 ծածկագիրը, վտանգավորության դասը՝ 4-րդ: Այս կարգի աղբի քանակը գնահատվում է 80-90 տ, այն կենցաղային թափոնների հետ միասին կտեղափոխվի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Փորման աշխատանքների ընթացքում առաջանում է չաղտոտված հող, որը ըստ ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006թ.-ի N342-Ն հրամանով հանդիսանում է 5-րդ դասի թափոն՝ «Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող», ծածկագիրը՝ 31401100 08 99 5, քանակը՝ 2 350 մ$^3$:

Աշխատանքների վայրում կարաջանա կենցաղային աղբ, որը ըստ վերը նշված հրամանի, ծածկագիր 9120040001004 (կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) վտանգավորության 4-րդ դաս:

Կենցաղային աղբի միջին տարեկան քանակը գնահատվում է 18 մ$^3$:

### 6.7. Սոցիալ տնտեսական ազդեցություններ և առողջապահական գործոններ

Նախատեսվող գործունեությունն ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություններ:

Բացասական ազդեցությունների շարքին են դասվում աղմուկի մակարդակը, փոշու արտանետումները հողային աշխատանքների ընթացքում, տրանսպորտային և շինարարական միջոցների շահագործման ընթացքում վառելիքի այրման արգասիքների արտանետումները: Դրանք նաև ազդում են շինարարական անձնակազմի և մերձակա թաղամասերի բնակիչների առողջության վրա:

Այնուամենայնիվ հարկ է նշել, որ ազդեցությունները կրում են ժամանակավոր բնույթ, այնինչ դրական հետևանքներն անհամեմատ ավելի մեծ են և երկարաժամկետ, այդ թվում.

- Շինարարության ընթացքում նոր աշխատատեղերի ստեղծում
- Բազմաթիվ ընտանիքների համար բնակարանային խնդիրների լուծում.
- Ենթակառուցվածների զարգացում:

## 7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

### 7.1. Բնապահպանական միջոցառումների ծրագիր

Շրջակա տարածքների և գործունեության ազդեցության ենթակա մոտակա հանրային միջավայրի վրա բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ, կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Այդ ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով *(ԲԿՊ)* նախատեսված՝ սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել՝ շինարարը, հսկող և վերահսկող մարմինները:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների կանխման կամ մեղմացման միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների ներկայացվում են ստորև:

### *7.1.1. Մթնոլորտային օդ*

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով,
- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով. հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով. պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում:

### *7.1.2. Ջրային ռեսուրսներ*

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- փոշենստեցման համար ջրցանը կատարել ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,
- ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքում անձրևների ժամանակ առաջացող հոսքաջրերը միավորել մեկ բակային ցանցում և ուղղորդել պարզարան: Անձրևաջրերի և հոսքաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակի ցածրադիր հատվածում և իրենից ներկայացնում է պլաստմասե տարողություն, որտեղ տեղի կունենա մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

### *7.1.3. Աղմուկի և թրթռումների ազդեցություն և մեղմացում*

Շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի մակարդակի գերազանցումներ ՀՀ-ում սահմանված նորմերից չի կանխատեսվում, քանի որ շինարարական աշխատանքներում օգտագործվող մեքենա-սարքավորումները կշահագործվեն ըստ արտադրող ընկերությունների հրահանգների: Բացի այդ հիմնական աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն օրվա ցերեկային ժամերին, այն է՝ ժամը 9:00-ից 18:00:

*Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝*

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում տեղադրել խլացուցիչներ,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում,
- բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը,
- Աշխատանքային գոտու աշխատավայրում և ազդակիր շինությունների տարածքում աղմուկի և թրթռումների մակարդակները չպետք է գերազանցեն ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի մարտի 6-ի թիվ 138-Ն հրամանով սահմանված մեծությունները:

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը՝ 45 դԲա, հաշվի առնելով առկա ազդակիր շինությունների (բնակելի տներ) հեռավորությունը շինտարածքից:

### *7.1.4. Հողային ռեսուրսներ*

Հողային ռեսուրսների պահպանության հիմնական միջոցառումը՝ բերրի հողաշերտի պահպանումն է: Հողի բերրի շերտի կտրումը, տեղափոխումը, պահպանումը և օգտագործումն պետք է իրականացնել, առաջնորդվելով «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 82 նոյեմբերի 2017 թվականի N 1404-Ն որոշմամբ

հաստատված կարգով:

Հանվող հողային զանգվածը (բերրի հողաշերտ և գրունտ), որն առաջանալու է նոր կառուցվող շենքների հիմքերի փորման ընթացքում, պահեստավորվելու է տեղում հատկացված առավել հարմար վայրում՝ ծածկի տակ: Ըստ նախնական գնահատման հողագրունտային զանգվածը կկազմի՝ 5600 մ³, հանվող բուսահողի ծավալը՝ 520 մ³:

Բերրի հողն ամբողջությամբ օգտագործվելու է տարածքի բարեկարգման և կանաչապատման նպատակով: Որպեսզի նվազագույնի հասցվի բերրի հողի հատկությունների կորուստը՝ պահպանման ընթացքում, յուրաքանչյուր տեղամասի աշխատանքների ավարտից այդ մասի բերրի հողը, առանց սպասելու ընդհանուր աշխատանքների ավարտին, անմիջապես կփռվի և կխնամվի:

Հողային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունները և վերջինիս մեջ վտանգավոր նյութերի և քսայուղերի ներթափանցումը կանխելու նպատակով նախատեսվում է.

- բուն գործունեության տարածքում յուղի, վառելիքի կամ այլ վտանգավոր հեղուկների պահման տեղամասեր չնախատեսել,
- շինարարական նյութերը տեղադրել հատուկ տակդիրների վրա,
- հողային գրունտը տարածքում պահպանել ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով,
- առաջացող շինաղբը տեղափոխել Ակունքի համայնքի կողմից նախատեսված աղբավայր,
- հանվող հողային զանգվածը օգտագործել հետլիցքի և տարածքի բարեկարգման համար,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարել տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,
- շինհրապարակից դեպի գյուղամիջյան ասֆալտապատ դուրս եկող ավտոտրանսպորտային միջոցները պարտադիր պետք է իրականացնեն անիվների լվացում: Լվացումը պետք է կատարվի մուտքի՝ դարպասի մոտ՝ փրփուռային միջոցներով՝ բացառելու համար աղտոտված լվացման ջրերի տարածումը շրջակայում: Այդ միջոցառման պատասխանատուն և իրականացնողը շինարարության Կապալառուն է:

### *7.1.5. Թափոնների կառավարում*

Նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, գործունեության տարածքում առաջացող տարբեր տեսակի թափոնները կարող են բացասաբար անդրադառնալ շրջակա միջավայրի վրա:

- քսայուղերի, հեղուկ վառելիքի հնարավոր մնացորդային քանակների առաջացման դեպքում վերջիններս պահել հատուկ անթափանց, փակ տարաներում՝ հետագայում որպես երկրորդային հումք վաճառել կամ հանձնել լիցենզավորված կազմակերպություններին,

- մեքենա-սարքավորումների լիցքավորումը, քսայուղերի փոխումը կամ նմանատիպ այլ գործողություններ իրականացնել մասնագիտացված կենտրոններում,

- շինհրապարակում բացառել թափոնների երկարաժամկետ կուտակումները, և մեկ ավտոմեքենայի թափքին համապատասխան քանակի թափոնի հավաքման դեպքում տեղափոխել համապատասխան աղբավայր,

- շինարարական աղբը ժամանակին տեղափոխել համայնքի ղեկավարի կողմից հատկացված աղբավայր՝ համայնքի ղեկավարի կամ աղբավայրը շահագործողների հետ նախապես կնքված պայմանագրերի համաձայն,

- կենցաղային աղբը հավաքվում է հատուկ տեղադրված աղբամաններում և համապատասխան սանիտարական ծառայության կողմից պարբերաբար տեղափոխվում համայնքի աղբավայր:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակները, իրենց քանակներով ներկայացված են նախորդ ենթաբաժիններում:

### *7.1.6. Կենսաբազմազանություն*

Անմիջապես նախատեսված տարածքում բնական բուսածածկ և վայրի կենդանիների ապրելավայրեր չկան:

- Ըստ հնարավորության բացառել ծառահատումները, առկա թփերի մաքրումը կատարել մասնագետների մասնակցությամբ,
- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցնել շինարարական աշխատանքները,
- շինարարական աշխատանքներն իրականացնել ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար,

Տարածքում կան մոտավորապես 13-16 ծառեր և  15-20 թփեր, ծառերի հիմնական մասը մրգատու ծառեր են, իսկ մնացածը վայրի փշատերևներ: Մի քանիսը գտնվում են անխնամ վիճակում են, մի քանիսը չորացած և ենթակա են հատման: Հատված ծառերի փոխարեն նախատեսվում է տնկել նոր ծառեր, որոնք հարմար են տեղի լանդշաֆտին և բնակլիմայական պայմաններին, նախատեսվում է իրականացնել կանաչապատում սիզամարգի տեսքով, կառուցել ծաղկանոցներ, համաձայն  կանաչապատման նախագծի:

### *7.1.7. Սոցիալական միջոցառումներ*

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելու նպատակով նախատեսվում է՝

- վտանգավոր տեղամասերում տեղադրել նախազգուշացնող նշաններ,
- տարածքի համապատասխան վայրերում տեղադրել տեղեկատվական վահանակներ աշխատանքների մասին,
- շինարարների համար՝ անվտանգության աուդիտների, առաջին օգնության և անվտանգության դասընթացների պարբերաբար կազմակերպելում և իրականացում,
- հնարավորության սահմաններում աշխատանքների համար ներգրավել տեղի բնակչությանը,
- ապահովել արժանավայել վարձատրություն, արձակուրդ և սոցիալական պաշտպանություն:

### *7.1.8. Աշխատանքի անվտանգություն և առողջություն*

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները ներառում են.

- աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար նշանակել պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:
- Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար՝ ցանկապատում, պահակակետեր, ցուցանակներ, արգելող պաստառներ այլ:
- Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակի բոլոր մեքենաներում և հատվածներում:
- Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժօգնության դեղատուփի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում:
- Անձնակազմը պետք է ապահովվի համապատասխան արտահագուստով և անհատական պաշտպանական միջոցներով:
- Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ աշխատանքի անվտանգության հրահանգավորում՝ աշխատանքը սկսելուց առաջ: Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել գրանցամատյանում:
- Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)

- Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, աշխատանքներն իրականացնել այնպես, որ նվազագույնի հասցվի ազդեցությունը հարևան բնակիչների և շրջակա տարածքների վրա:

- Շինարարական հրապարակում շինարարական աշխատանքների կազմակերպման և անվտանգության ապահովման համար առաջնորդվել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2025 թվականի մարտի 5-ի թիվ 7 հրամանով հաստատված ուղեցույցով:

- Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ:

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները շինարարության փուլում կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված միջոցառումների:

### *7.1.9. Հակահրդեհային միջոցառումներ*

Շինարարական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է՝

- մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից,

- շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում կարևորվում է ղեկավարվել Առողջապահութան նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

## 8. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Մոնիթորինգի իրականացումը հնարավորություն կստեղծի ունենալ տեղեկատվական հենք՝ վնասակար ազդեցությունների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման համար:

Մոնիթորինգի իրականացման հիմնական նպատակն է ստեղծել տեղեկատվություն միջավայրի փոփոխությունների մասին:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ:

Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:

Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ ազդակիր բնակիչների բողոքի առկայության դեպքում,

Չափումները կիրականացվեն նաև արտապլանային՝ բողոքների դեպքում:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է.

- Առաջին տարվա ընթացքում՝ 350 հազ. դրամ,
- Մնացած տարիների ընթացքում՝ 140 հազ. դրամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ ուղղված շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանը:

# ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

| Ծրագրի Գործողու-թյունները | Հնարավոր Ազդեցությունները | Առաջարկվող մեղմացնող Միջոցառումները | Մեղմացնող միջոցառման պատասխա-նատուն | Մոնիթորինգի պատասխա-նատուն |
|---|---|---|---|---|
| Նախագծային փաստաթղթերի պատրաստում | Բացասական ազդեցություններ՝ շինարարության փուլում, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում, | - Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև պայմանագրային փաստաթղթերում:<br>- Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունների ձեռքբերում<br><br>- Տարածքում առկա ինժեներական ենթակառուցվածքների անջատման, կամ տեղափոխման վերաբերյալ թույլտվության ձեռք բերում, | Շինարարության կապալառու | Տեխնիկական վերահսկող<br><br>Ակումբի համայնքապետարան |
| Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները | ԲԿՊ-ի բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման: | - Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:<br>- Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ:<br>- Շինարարական հրապարակում շինարարական աշխատանքների կազմակերպման և անվտանգության ապահովման համար առաջնորդվել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2025 թվականի մարտի 5-ի թիվ 7 հրամանով հաստատված ուղեցույցով: | Կապալառու | |
| Աշխատողների, ինչպես նաև | | - Աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան բնակիչների և շրջակա տարածքների վրա: | Կապալառու | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց անվտանգություն | | - Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)<br>- Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ: | | |
| Հողային աշխատանքներ, շինանյութերի փոխադրումներ, այլ շինարարական աշխատանքներ | Շին տեխնիկայի շահագործումից փոշու և վնասակար նյութերի արտանետումներ; | - Օդի աղտոտման և փոշու կառավարում մթնոլորտային օդի և աղմուկի մակարդակի մշտադիտարկում շինարարության ողջ ընթացքում արտաքին դիտարկման եղանակով:<br>Օդի որակի չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքների դեպքում:<br>- Անհրաժեշտ է իրականացնել շին հրապարակի պարբերական ջրցանում փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով;<br>- Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և հնարավորինս ծածկել կուտակված նյութերը փոշու տարածումից խուսափելու համար;<br>- Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով;<br><br>- Շինարարական աշխատանքների ընթացքում հատուկ տարողություններ և աղբի կուտակման տարածքներ կնախատեսվեն տարբեր տեսակի շինարարական աղբի հեռացման համար<br>- Աշխատանքների ընթացքում առաջացած շինարարական թափոնները և աղբն անմիջապես կտեղափոխվեն համապատասխան թափոնավայրեր և չեն առաջացնի կուտակումներ<br>- Շրջակա տարածքները պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով | Շինարարության կապալառու | Տեխնիկական վերահսկող,<br><br>Ակունքի համայնքապետարան<br><br>Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Պատահական գտածոի հայտնաբերում | - ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի N438 որոշման 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման դեպքում աշխատանքները կդադարեցվեն և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին: | | |
| Թափոնների կառավարում | Շին.աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում;<br><br>Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափան-ցում հողի մեջ: | - Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:<br>- Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:<br>- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից<br>- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել<br>- Աշխատանքների ընթացքում բացառել թափոնների և աղբի այրում<br>- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նախատեսել գոյացող, օգտագործվող, այլ անձանց կամ լիցենզավորված կազմակերպության փոխանցվող, ինչպես նաև տեղադրվող թափոնների սկզբնական հաշվառում | Շինարարության կապալառու | Տեխնիկական վերահսկող,<br><br>Ակունքի համայնքապետարան |
| Աղմուկի և թրթռումների կառավարում | Շին աշխատանքների արդյունքում աղմուկի և թրթռումների մակարդակի աճ: | - Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:<br>- Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:<br>- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:<br>- Անհարաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը; | Շինարարության կապալառու | Ակունքի համայնքապետարան |
| Շինհրապարակի | | - Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ ապված բոլոր պարագաները, այդ թվում՝ | Շինարարության | Ակունքի համայնքապետա |

| | | | | |
|---|---|---|---|---|
| վերականգնում | | չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը և այլն;<br>- Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները;<br>- Մաքրել շինհրապարակը աղբից<br>- Կատարել կանաչապատման/բարեկարգման աշխատանքները<br>- Ձեռնարկել տնկված ծառերի, թփերի և խոտածածկի պահպանումը և մոնիթորինգը՝ բուսականության բարձր կպչողականություն աճն ապահովելու համար | կապալառու | րան |
| Շինարարական աշխատանքներ | Բուսականության և վայրի կենդանիների ապրելավայրերի պաշտպանություն | - շինարարական մեքենա-սարքավորումների տեղաշարժի կազմակերպում սահմանափակ արագությամբ (≤30 կմ/ժ), ինչպես նաև մեքենաների իրար հաջորդող տեղաշարժի կազմակերպում՝ առնվազն 30 րոպե պարբերականությամբ,<br>- տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից դուրս արգելել,<br>- շինհրապարակում խուսափել՝ շինարարական աղբի այրումից և կուտակումից,<br>- բոլոր աշխատողները պետք է հատուկ հրահանգավորվեն բնական միջավայրերում աշխատելու կանոնների մասին: | | |

*Մեղմացնող միջոցառումների ինդիկատիվ արժեքը գնահատվում է նախագծային աշխատանքների արժեքի մոտավորապես՝ 1,2%*

## ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ/ ՊԼԱՆ

| **Գործողություն** | **Նվազեցնող միջոցառումներ** | **Որտեղ իրականացնել** | **Ինչպես իրականացնել** | **Ժամանակամիջոց** | **(ո՞վ է իրակա-նացնում մոնիթո-րինգը)** |
|---|---|---|---|---|---|
| Շինանյութերի մատակարարում | - Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից | Մատակակարի հիմնարկում կամ պահեստում | Փաստաթղթերի ստուգում | Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում | Կապալառու |
| Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ | - Մեքնաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում<br>- Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ<br>- Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում | - Շինհրապարակ<br>- Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ | Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում | Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում | Կապալառու Ակունքի համայնքապե-տարան |
| Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում | - Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի փրփուրային միջոցով,<br>- Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ սպասարկման կետերում<br>- Իրականացնել շահագործվող տրանսպորտային և այլ փոխադրամիջոցների պարբերական ստուգումներ | Շինհրապարակ | Գործընթացների գործունեության ստուգում | Մեխանիզմների շահագործման ընթացքում | Կապալառու Ակունքի համայնքա-պետարան |
| Հողային աշխատանքներ | - Հանված հողային գրունտները պահեստավորում են հատուկ պահեստավորված վայրում<br>- Անհրաժեշտության դեպքում ետլիցք, ավելցուկի օգտագործում տարածքի բարեկարգման նպատակով | Շինհրապարակ | Գործընթացների հործունեության ստուգում | Հողային աշխատանքների ընթացքում | Պատվիրատու Կապալառու Ակունքի համայնքապե-տարան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Կենսաբազմա-զանություն | - Անհրաժեշտ է ապահովել տարածքում առկա բուսականության (եթե առկա են) ոռոգման միջոցառումները շինարարության ընթացքում,<br>- Անհրաժեշտ է բացառել տարածքում այն ծառերի և թփերի հատումը, որոնք նախագծի համաձայն ազդեցության չեն ենթարկվում<br><br>- Հողային կամ շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերված կենդանական աշխարհի բնադրավայրերի և/կամ միգրացիոն ուղիների դեպքերը կգրանցվեն, տեղեկատվությունը տրամադրվի պատասխանատու մարմիններին, որոշումներ կկայացվեն դրանց պահպանմանը կամ փոփոխմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ | Շինհրապարակ | Շինհրապարակի զննում | Շինարարության ընթացքում | Կապալառու |
| Շինարարական հրապարակի բարեկարգում | Շինարարական հրապարակի ժամանակավոր պահեստի ապամոնտաժում և տեղանքի բարեկարգում<br>- Շինհրապարակի վերջնական մաքրում, տարածքի բարեկարգում և վերականգնում | Շինարարական հրապարակ, ժամանակավոր պահեստներ | Ստուգման գործընթացներ | Շինարարության ավարտական փուլ | Կապալառու Ակունքի համայնքապե-տարան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Աշխատանքի անվտանգություն | - Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով<br>- Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն<br>-Հակահրդեյին միջոցառումների իրականացում | Շինհրապարակ | Ստուգման գործընթացներ | Աշխատանքների ողջ ընթացքում | Կապալառու Ակունքի համայնքապե-տարան Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին |
| Շինհրապարակի վերականգնում, կանաչապատում և տարածքի բարեկարգում | - Շինհրապարակը մաքրված է, նյութերը և թափոնները հեռացված են,<br>- բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են,<br>- շինհրապարակի տարածքը բարեկարգված և կանաչապատված են, ապահովված է ծառերի թփերի և այլ բուսականության նորմալ աճ<br>-բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են, | Տեղամասեր Կատարած Ստուգայցեր<br><br>Կանաչապատվող բոլոր տեղամասերը | Շինհրապարակի զննում<br><br>Ստուգայցեր | Շինարարության ավարտին<br><br>Շինարարության ավարտից սկսած մինչև ծառերի աճի կպչողականության ապահովումը | Կապալառու Ակունքի համայնքապետարան<br><br>Կապալառու Ակունքի համայնքապետարան |

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. ՀՀ Օրենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 03.05.2023թ. ՀՕ-150-Ն:
2. Շինարարական Կլիմայաբանութուն 2024: ՀՀՇՆ22-01-2024 ՀՀ քաղաքաշինության նախարարի 2024թ. Հունվարի 16-ի N03-Ն հրաման:
3. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
4. ՀՀ Կառավարության որոշում N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին», 19 նոյեմբերի 2014 թ.:
5. ՀՀ Կառավարության որոշում N 2343-Ն «ՀՀ կառավարության 2014թ. նոյեմբերի 19-ի N1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 28 դեկտեմբերի 2023 թվական
6. Ավտոմոբիլային տրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկման մեթոդական ցուցումներ, Մոսկվա, Հիդրոմետիրատ – 1983:
7. ՀԲ 2015: Բնապահպանական և սոցիալական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
8. ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:
9. www.arlis.am
10. www.armmonitoring.am
11. www.armstat.am
12. www.kotayk-akunk.am
13. www.kotayk.mtad.am

## ՀԱՎԵԼՎԱԾ 1. Անշարժ գույքի պետական գրանցման վկայական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ**

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 28 փետրվարի 2024 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

**1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)**

«ՀԱՏՇԻՆ ՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ

**2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

Մարզ Կոտայք, համայնք Ակունք գյուղ Նոր գյուղ 1-ին փողոց 7

**3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Պետական գույքի օտարման և գրավի պայմանագիր 16.02.2024թ. N 2230

**4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**

Կադաստրային ծածկագիրը՝ 07-049-0030-0014
Մակերեսի չափը (հա)՝ 2.9383
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ N 28022024-07-0120, գաղտնաբառ՝ QEVAA62APQJW**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

**էջ 1/2**

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| 1 | 07-049-0030-0014-010 | Ցուցասրահ | 225.77 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 2 | 07-049-0030-0014-002 | Լաբորատորիայի շենք | 6545.5 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 3 | 07-049-0030-0014-003 | Ֆիզիոլոգիայի շենք | 1283.9 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 4 | 07-049-0030-0014-004 | Անասնաշենք | 1277.6 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 5 | 07-049-0030-0014-005 | Սանիտարա-սպանդային շենք | 133.87 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 6 | 07-049-0030-0014-006 | Կաթսայատուն | 546.45 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 7 | 07-049-0030-0014-007 | Ավտոտնակ | 327 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 8 | 07-049-0030-0014-008 | Պահեստ | 544.25 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 9 | 07-049-0030-0014-009 | Ավտոտնակ | 432 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 10 | 07-049-0030-0014-001 | Կոնդիցիոներային շենք | 287.4 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |

## Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԳՈՀԱՐ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

**ՎԿԱՅԱԿԱՆ N 28022024-07-0120, գաղտնաբառ՝ QEVAA62APQJW**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

Կադաստրի կոմիտե

# ՀԱՎԵԼՎԱԾ 2. Նախագծման թույլտվություն

Ձև N 1-2

PM45-38A7-8CE6-8372

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
## (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

**N ՆԹ-0107-25 14.01.2025թ.**

Օբյեկտ **Վերակառուցում, «Հասարակական նշանակության օբյեկտի վերակառուցում բնակելի թաղամասի և նոր մասնաշենքերի կառուցում» 1ին փուլով նախատեսվելու է գոյություն ունեցող 4 հարկանի նկուղային տարածքով շինությունը վերակառուցել 5 հարկանի ներառյալ մանսարդը շինության, ինչպես նաև 3 հարկանի նկուղային տարածքով շինությունը վերակառուցել 4 հարկանի ներառյալ մանսարդը շինության, իսկ միահարկ շինությունը վերակառուցել տաս հատ թաունհաուսների,ինչպես նաև 4-րդ մասնաշենքը վերակառուցել սուպերմարկետի և արագ սննդի սպասարկման օբյեկտի, 2-րդ փուլով ութ վերգետնյա և մինչև երկու ստորգետնյա հարկերով բնակելի 2 շենքի կառուցում, գործառնական նշանակության փոփոխություն՝ խառը կառուցապատման**

**նախագծման փուլերը՝ աշխատանքային նախագիծ, ռիսկայնության աստիճանը՝ IV** նախագծային փաստաթղթերի մշակման համար։

Գտնվելու վայրը **Մարզ՝ Կոտայք, համայնք՝ Ակունք գյուղ Նոր գյուղ 1-ին փողոց 7, 07-049-0030-0014**

Կառուցապատող **«ՀԱՏԸԻՆ ՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ / 03573221 / Հայաստան, ԿՈՏԱՅՔ, ՆՈՐ ԳՅՈՒՂ, 1-ԻՆ Փ., Շ 7**

Առաջադրանքի տրամադրման հիմքը **ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ «ՀԱՏԸԻՆ ՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ 28022024-07-0120 Կառուցապատողի 2024 թվականի մայիսի 29-ի հայտ, 2025 թվականի հունվարի 7-ի հայտը և փոփոխված էսքիզային նախագիծը,**

Առաջադրանքի գործողության ժամկետը **մինչև 30.05.2026թ.**

### ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
**(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)**

| | |
|---|---|
| 1. Հողամասը գտնվում է | Հասարակական կառուցապատման, բնակավայրերի |
| 2. (*) Հողամասի չափսերը | 2.9383 |
| 3. Հողամասի առկա վիճակը | Հողամասը վերակառուցվում է բնակելի թաղամասի |
| 4. (*) Տրանսպորտային պայմանները | ներհամայնքային նշանակության ճանապարհներ |

| | |
|---|---|
| 5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) | տարածքում ինժեներական ցանցեր չկան<br>(նախագծվող հողամասում կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա) |
| 6. (*) Կից հողամասեր | առկա են բնակելի տներ, հողամասեր և տարածքներ<br>(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի) |
| 7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) | Բնության հատուկ պահպանվող և պատմամշակութային հուշարձանների տարածքներ կամ պահպանական գոտիներ չկան<br>(հուշարձանի անվանումը) |
| 8. (*) Հատակագծային սահմանափակումներ | Հաշվի առնել կից տարածքներում առկա և նախատեսվող կառուցապատումը<br>(տեղանքում զբաղված արտադրական, պաշտպանական օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները) |

**Ն Ա Խ Ա Գ Ծ Ա Յ Ի Ն   Պ Ա Հ Ա Ն Ջ Ն Ե Ր Ը**

**(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)**

| | |
|---|---|
| 9. Ճարտարապետահատակագծային պահանջներ | Հասարակական նշանակության օբյեկտի վերակառուցման բնակելի թաղամասի և նոր մանսաշենքերի կառուցման նախագիծ անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականով տրված՝ ՀՀ Կոտայքի մարզ Ակունք համայնք գյուղ Նոր գյուղ 1-ին փ. թիվ 7,ծածկագիր՝07-049-0030-0014, հողամասի սահմաններում տեղակայել N1 բնակելի շենքը փոփոխություններով<br>(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջներից, ամբողջ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կառուցապատման [illegible] քաղաքաշինական միջավայրի առանձնահատկություններից, առաջարկություններ ծավալային ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և ցոկոլային մասերի վերաբերյալ) |
| 9.1.(*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) | ըստ Նորմերի |
| 9.2.(*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) | ըստ Նորմերի |
| 9.3.(*) թույլատրելի բարձրությունը (մետր) | գետնի նախագծային նիշից 8 հարկ - 32,0 մ<br>(սահմանային հարկայնության բարձրությունը փոխադրվող շենքերի և շինությունների նախագծման դեպքում ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովման (հատուկ հակասեյսմիկ միջոցներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն)) |
| 9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի, (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) | համաձայն Նորմերի |
| 9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի տարածքին՝ տոկոսներով) (%) | մինչև 40% կառուցապատում, մինչև 20% անջրանցիկ |
| 9.6 կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)) | մինչև 40% |
| 9.7 այլ պահանջներ | Հատակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմատիվային պահանջները |

| | |
|---|---|
| 10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը | Կառուցապատված չէ |
| 11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները | ստորգետնյա հարկերը օգտագործել որպես ավտոկայանատեղի, ըստ անրաժեշտության՝ որպես թաքստոց |
| 12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ | |
| 12.1 (*) ջրամատակարարում կոյուղի, տաք ջրի մատակարարում | Համաձայն «Վեոլիաջուր» ընկերության կողմից տրված տեխնիկական պայմանի<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.2 (*) Էլեկտրամատակարարում | Համաձայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ կոմից տրված տեխնիկական պայմանի<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.3. (*) գազամատակարարում | Համաձայն «Գազպրոմ Արմենիա » ՓԲԸ կոմից տրված տեխնիկական պայմանի<br>(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների) |
| 12.4. (*) Էլեկտրոնային հաղորդակցություն մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը | Նախագծի համաձայն<br>[illegible] |
| 12.5. թույլ հոսանքներ | Չի նախատեսվում |
| 12.6. աղբահանություն | Շինարարական աղբը տեղափոխել համայքի կողմից հատկացվող աղբավայր՝ համայնքի հետ կնքված պայմանգրի համաձայն |
| 13. Տարածքի ինժեներական նախապատրաստում | Կազմակերպել տարածքի ջրահեռացումը<br>(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները) |
| 14. Բարեկարգում | Նախատեսել տարածքի բարեկարգման աշխատանքներ<br>[illegible] |
| 15. Շինարարական նյութեր | օգտագործել ստանդարտներին /ԳՈՍՏ/ համապատասխանող շինարարարական նյութեր՝ շրջակայքին համապատասխան<br>[illegible] |
| 16. Պաշտպանական կառույցներ | Շենքի նկուղների ըստ անհրաժեշտության օգտագործել որպես թաքստարան<br>[illegible] |
| 17. Հակահրդեհային պահանջներներ | Ապահովվել հակահրդեհային պահանջները գործող նորմերի համաձայն<br>(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները) |
| 18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ | Նախատեսել ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՍՆ 3.02-05-2003) շինարարական նորմերին համապատասխան |
| 19. Շրջակա միջավայրի պահպանում | Ըստ օրենսդրության<br>[illegible] |
| 20. Շինարարության կազմակերպում | սահմանազատել շին. հրապարակը, նախատեսել շինարարության կազմակերպման և անվտանգության միջոցառումների սխեմա, աշխատանքների իրականացման օրացուցային գրաֆիկ<br>[illegible] |
| 21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը | մինչև 30.05.2026թ., նախագծման փուլերը՝ աշխատանքային նախագիծ,<br>[illegible] |

**Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ   Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ը**

| | |
|---|---|
| 22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ | Սեսմիկ փորձաքնություն հարկավոր է, Համալիր փորձաքնություն հարկավոր է, Պարզ փորձաքննություն հարկավոր է<br>([illegible]) |
| 23. Միջանկյալ համաձայնեցում | Համաձայնեցում Ակունք համայնքի ղեկավարի հետ<br>([illegible] N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում) |
| 24. Հասարակական քննարկումներ | <br>([illegible]) |
| 25. Համաձայնեցումների կամ Մասնագիտական եզրակացությունների ստացում | Մինչև նախագծային աշխատանքներ սկսելը համաձայնեցում ձեռք բերել տվյալ ինժեներական ենթակառուցվածքների սեփականատերերի (օգտագործողների) հետ, տեխնիկական վիճակի (սեյսմիկ) զննության եզրակացություն<br>([illegible] N 1 հավելվածի 56-րդ կետով [illegible] (օգտահործողի) հետ) |
| 26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում | առկա չէ<br>([illegible] N 1 հավելվածի 56-րդ կետով [illegible] (օգտահործողի) հետ) |
| 27. Քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված լրացուցիչ պայմաններ | Իլրումն ի փոփոխություն 2024թվականի մայիսի 30-ի N 71 ճարտարապետահատակագծային առաջադրանքի |
| 28. Այլ պայմաններ | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

([illegible])

14.01.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

## ՀԱՎԵԼՎԱԾ 3. Հողամասի հատակագիծ

### ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Հողամասի գործառնական նշանակության փոփոխության առաջարկություն

Բնակավայրի հասարակական կառուցապատման 2.9383հա հողամասը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման փոփոխման






| | |
|---|---|
| Մակերես(հա) | 2.9383 |
| Ծածկագիր | 07-049-0030-0014 |
| Նպատակային նշանակությունը | Բնակավայրերի |
| Գործառնական նշանակությունը | Բնակելի կառուցապատման |
| Հողամասը ծանրաբեռնված է | Շենք-շինություններով |

Կոորդինատները տպագրված են հաջորդ էջում

Կոտայքի մարզպետ՝ Ա. Սահակյան

Հողաշինական բաժնի պետ՝ Գ. Ավետիսյան

Ակունք համայնքի ղեկավար՝ Հ. Ռուբենյան

| Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատներ | | Գծային չափեր |
|---|---|---|---|
| | X | Y | |
| 1 | 8470088.1628 | 4459071.9342 | 33.30 |
| 2 | 8470111.0743 | 4459096.109 | 32.36 |
| 3 | 8470133.3372 | 4459119.5995 | 111.19 |
| 4 | 8470055.4597 | 4459198.9642 | 17.05 |
| 5 | 8470043.3662 | 4459210.9862 | 100.00 |
| 6 | 8469980.0784 | 4459133.5589 | 14.24 |
| 7 | 8469971.0615 | 4459122.5276 | 40.00 |
| 8 | 8469945.7465 | 4459091.5567 | 2.52 |
| 9 | 8469944.1163 | 4459089.6301 | 23.44 |
| 10 | 8469960.3659 | 4459072.7236 | 5.06 |
| 11 | 8469964.0001 | 4459076.2545 | 46.46 |
| 12 | 8469996.7778 | 4459043.3235 | 59.64 |
| 13 | 8469954.3578 | 4459001.3901 | 28.66 |
| 14 | 8469933.8793 | 4459021.4538 | 5.50 |
| 15 | 8469930.1168 | 4459017.4421 | 5.20 |
| 16 | 8469926.5596 | 4459013.6493 | 90.45 |
| 17 | 8469864.6807 | 4458947.6724 | 26.24 |
| 18 | 8469883.3153 | 4458929.1867 | 8.68 |
| 19 | 8469889.5101 | 4458923.1063 | 37.19 |
| 20 | 8469915.6025 | 4458949.6074 | 25.41 |
| 21 | 8469933.833 | 4458931.9044 | 15.57 |
| 22 | 8469945.003 | 4458942.756 | 66.39 |
| 23 | 8469992.051 | 4458895.911 | 3711 |
| 24 | 8470018.7432 | 4458921.6942 | 26.54 |
| 25 | 8470000.379 | 4458940.8683 | 0 |
| 26 | 8470000.379 | 4458940.8683 | 19.30 |
| 27 | 8469987.0292 | 4458954.8069 | 0 |
| 28 | 8469987.0292 | 4458954.8069 | 13.50 |
| 29 | 8469977.687 | 4458964.5611 | 28.35 |
| 30 | 8469998.2872 | 4458984.0382 | 6.04 |
| 31 | 8469993.5174 | 4458987.7533 | 4.44 |
| 32 | 8469990.0116 | 4458990.4838 | 70.85 |
| 33 | 8470041.4939 | 4459039.1593 | 8.43 |
| 34 | 8470049.7639 | 4459037.5249 | 21.93 |
| 35 | 8470064.8307 | 4459021.5893 | 18.31 |
| 36 | 8470077.4131 | 4459008.2814 | 21.51 |
| 37 | 8470092.1964 | 4458992.6457 | 17.79 |
| 38 | 8470104.9966 | 4459005.0099 | 6.50 |
| 39 | 8470109.6473 | 4459009.5511 | 5.00 |
| 40 | 8470106.1541 | 4459013.1286 | 6.50 |
| 41 | 8470101.5034 | 4459008.5874 | 53.33 |
| 42 | 8470064.7592 | 4459047.2402 | 34.02 |
| 1 | 8470088.1628 | 4459071.9342 | |

# ՀԱՎԵԼՎԱԾ 4. Կանաչապատման/բարեկարգման նախագիծ

## ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:1000



ARCHICAD EDUCATION VERSION

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

ԳՏՆՎՈՒՄ Է ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 7 ՀԱՍՑԵՈՒՄ, ԸՆԴՀԱՆՈՒՐ՝ 2,9383 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ: ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՄԱԿԵՐԵՍԸ ԿԱԶՄՈՒՄ Է 6 275 Մ², ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ՝ 29 383 Մ², ՈՐԻՑ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ Է 11 752,0 Մ² ՏԱՐԱԾՔ: ՎԵՐՋԻՆՍ ԿԱԶՄՈՒՄ Է ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԱԾՔԻ 40 ՏՈԿՈՍԸ:
ՏԱՐԱԾՔՈՒՄ, ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՎ, ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ՏՆԿԵԼ ԹՎՈՎ 268 ԾԱՌԵՐ ԵՎ ԹՓԵՐ, 41 Մ² ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԾԱՂԿԱՆՈՑՆԵՐ:

ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՁԱՅՆ՝ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ՏԵՂԱՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՄԻԿՐՈՖԼՈՐԱՆ, ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ Է ԿԻՐԱՌԵԼ ՄՏՈՐԵՎ ՆՇՎԱԾ ԾԱՌԵՐԻ ԵՎ ԲՈՒՍԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆԻՆ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ, ՄԻՄՅԱՆՑԻՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՏՆԿՄԱՆ ՍԽԵՄԱՅՈՎ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ՝ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԾԱՂԿԱՄԱԾԻԼՆԵՐԻ ՈՒ ՄԻՋԱՄԱՐԳԻ ՍԵՐՄԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՆԱԿՆ ՈՒ ՔԱՇԸ:
ԲՈՒՍԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ Է, ԹԵ՛ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐՈՎ, ԹԵ՛ ԳԵՂԱԳԻՏՈՐԵՆ ՆԵՐԴԱՇՆԱԿ ՄԻՋԱՎԱՅՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐՈՎ:

ՏԱՐԱԾՔԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԲԵՐՈՎԻ ՋՐՈՎ:



## ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՔԱՆԱԿԻ

| ՀԱՄԱՐ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ԱՆՎԱՆՈՒՄ | ԼՈՐԵՆԻ  | ԾԻՐԱՆԻ  | ԵՂԵՎՆԻ  | ԲԱՐԴԻ  | ԽՆՁՈՐԵՆԻ  | ԱԿԱՑԻԱ  | ՍԱԼՈՐԻ  | ԾԱՂԿԱԾԱՍԻԼ  | ՍԻԶԱՄԱՐԳ ՍԵՐՄ |
| ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐ | ՀԱՏ | ՀԱՏ | ՀԱՏ | ՀԱՏ | ՀԱՏ | ՀԱՏ | ՀԱՏ | ՀԱՏ | ԿԳ |
| ՔԱՆԱԿ | 33 | 15 | 3 | 85 | 60 | 64 | 8 | 2200 | 300 |

## ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՏՆԿՄԱՆ ՍԽԵՄԱՅԻ

| ՀԱՄԱՐ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ԱՆՎԱՆՈՒՄ | ԼՈՐԵՆԻ  | ԾԻՐԱՆԻ  | ԵՂԵՎՆԻ  | ԲԱՐԴԻ  | ԽՆՁՈՐԵՆԻ  | ԱԿԱՑԻԱ  | ՍԱԼՈՐԻ  | ԾԱՂԿԱԾԱՍԻԼ  |
| ՏՆԿՄԱՆ ՍԽԵՄԱ |   |   |   |   |   |   |   |   |

# ՀԱՎԵԼՎԱԾ 5. Ջրամատակարարման պայմանագիր

VEOLIA
Ջուր

**Հավելված №2**

*Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի N379Ն որոշման*

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ**
**(ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ**
**(ՄԱՏԱԿԱՐԱՐ- ՈՉ ԲՆԱԿԻՉ ԲԱԺԱՆՈՐԴ)**

Հաշվառման քարտ N 318787186

Արփենի
(պայմանագրի կնքման վայրը)

« 3 » 04 2024 թ.

Մատակարարը՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ Ք.Երևան,Աբովյան 66ա

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

ի դեմս Գլխավոր տնօրեն Մարիաննա Շահինյանի, որը գործում է

(անունը, ազգանունը, պաշտոնը)

Ընկերության կանոնադրության և ԼՋ N 0001 Լիցենզիայի

(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

հիման վրա, մի կողմից, ,և բաժանորդը՝

[illegible]

(իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող

[illegible]

(կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը (անունը, ազգանունը), գտնվելու (բնակության) վայրը, միացման կետի հասցեն)

ի դեմս Տնօրեն [illegible],

(պաշտոնը, անունը, ազգանունը)

որը (ով) գործում է Կանոնադրության հիման վրա,

(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մյուս կողմից, համատեղ կոչվելով կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույն պայմանագրում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

1) **հանձնաժողով՝** Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.

2) **կանոններ՝** հանձնաժողովի կողմից հաստատված խմելու ջրի մատակարարման եվ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոններ.

3) **առևտրային հաշվառքի սարք՝** պետական չափագիտական մարմնի կողմից ստուգաչափված ու կապարակնքված խմելու ջրի քանակի հաշվառքի սարք, որի նույնականացման տվյալներն ամրագրվում են սույն պայմանագրում.

4) **առևտրային հաշվառքի սարքի խախտում՝** պետական չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ հաստատված առևտրային հաշվառքի սարքի առանձին մասի խափանումը կամ վնասումը, կամ կապարակնիքի բացակայությունը կամ վնասումը, կամ կեղծումը, կամ սարքի բնականոն աշխատանքի որևէ այլ խաթարումը՝ արտաքին միջամտությամբ կամ առանց դրա.

5) **հաշվարկային ամիս՝** ժամանակահատված, որը սկսվում է օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 00:00-ին և ավարտվում է վերջին օրվա ժամը 24:00-ին.

6) **տեխնիկական պայմաններ՝** մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միանալու, բաժանորդին մատակարարված խմելու ջուրը

հաշվառելու, մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով մատակարարի կողմից առաջադրվող պայմաններ, որոնք սահմանվում են՝ ելնելով մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի թողունակության, հուսալիության, այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը չխախտելու և դիմող անձի նոր միացման համար անհրաժեշտ ընդլայնման աշխատանքները նվազագույն ծախսերով իրականացնելու պայմաններից:

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2. Մատակարարը պարտավորվում է բաժանորդին մատուցել՝

խմ. ջր. և ջրահեռ.

(խմելու ջրի մատակարարման և (կամ) ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման)

ծառայություններ (այսուհետ՝ ծառայություններ), իսկ բաժանորդը՝ վճարել դրանց դիմաց՝ կանոններով և սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

## 3.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Մատակարարի և բաժանորդի փոխհարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, կանոններով, սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով:

4. Բաժանորդը պարտավոր է՝

1) վճարել մատուցված ծառայությունների դիմաց՝ կանոններով և սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում,

2) թույլ չտալ առևտրային հաշվառքի սարքի խախտում,

3) պահպանել հեռացվող կեղտաջրերի բաղադրությունը՝ համաձայն տեխնիկական պայմանների,

4) մատակարարի ներկայացուցչի կողմից ծառայողական վկայական ներկայացնելու դեպքում չխոչընդոտել նրա մուտքն իր սեփականությունը հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող տարածք՝ առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցման, ապօրինի միացման կամ առևտրային հաշվառքի սարքի (անկախ դրա պատկանելությունից) խախտման դեպքերի առկայության համատեղ ստուգման նպատակով,

5) առևտրային հաշվառքի սարքի խախտման կամ մատակարարված խմելու ջրի որակի վերաբերյալ կասկած առաջանալու պարագայում առաջին իսկ հնարավորության դեպքում այդ մասին տեղեկացնել մատակարարին,

6) ջրամատակարարվող տարածքի նկատմամբ իրավունքի դադարման դեպքում դիմել մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու, սույն պայմանագիրը լուծելու և ծառայությունների մատուցումը դադարեցնելու համար, ինչի վերաբերյալ մատակարարը տեղեկանք է տալիս բաժանորդին:



5. Բաժանորդն իրավունք ունի՝

1) մատակարարի կողմից նախորդ հաշվարկային ամսում մատուցված ծառայությունների դիմաց հաշվարկային փաստաթուղթ չներկայացնելու դեպքում կանոններով սահմանված կարգով չվճարել մատուցված ծառայությունների դիմաց,

2) պահանջել, որ մատակարարն առևտրային հաշվառքի սարքի հետ կապված որևէ աշխատանք, ներառյալ ապահավաքակնքումը կամ ստուգաչափումը, իրականացնի իր ներկայությամբ՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում,

3) կապարակնքել առևտրային հաշվառքի սարքը,

4) մասնակցել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը:

6. Մատակարարը պարտավոր է՝

1) ապահովել բաժանորդին ծառայությունների հուսալի մատուցումը՝ ծառայություններին ներկայացվող նորմատիվ պահանջներին համապատասխան, իսկ սույն պայմանագրով նախատեսված դեպքերում նաև՝ պայմանագրով ամրագրված չափաքանակներով,

2) իր հաշվին իրականացնել առևտրային հաշվառքի սարքի տեղակայումը և կապարակնքումը՝ կանոններով սահմանված կարգով,

3) առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակնքումը, ստուգաչափումն իրականացնել կանոններով սահմանված կարգով և ժամկետում,

4) առևտրային հաշվառքի սարքի ստուգաչափման դեպքում իր հաշվին տեղակայել նոր առևտրային հաշվառքի սարք՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում,

5) կանոններով սահմանված կարգով և ժամկետում սպառիչ պատասխանել բաժանորդի դիմումին՝ հանգամանորեն ներկայացնելով դիմումի առնչությամբ գործող իրավական դաշտը, կողմերի իրավունքներն ու պարտականությունները,

6) բաժանորդի ջրամատակարարման դադարեցումը կամ ընդհատումը, դրա վերականգնումը, ինչպես նաև այդ մասին բաժանորդին իրազեկումն իրականացնել կանոններով սահմանված կարգով և ժամկետում,

7) կազմել և բաժանորդին ներկայացնել մատակարարված ծառայությունների համար հաշվարկային փաստաթուղթ՝ սույն պայմանագրի և կանոնների համաձայն,

8) բաժանորդի կողմից հաշվարկային փաստաթղթում վճարման ենթակա գումարի հաշվարկի ճշտությանը կասկածելու դեպքում վերջինիս պահանջով կանոններով սահմանված ժամկետում պարզաբանել մատուցված ծառայությունների քանակի և դրանց դիմաց վճարման ենթակա գումարի հաշվարկված մեծությունների ճշտությունը, անհրաժեշտության դեպքում կանոնների համաձայն կատարել ուղղում, չդադարեցնել բաժանորդի ջրամատակարարումը, եթե վերջինս վճարել է ծառայությունների՝ իր կողմից չվիճարկվող մասի արժեքը: Բաժանորդը պետք է ողջամտորեն հիմնավորի իրեն մատուցված ծառայությունների վիճարկվող մասի արժեքը՝ հիմնավորումները գրավոր ներկայացնելով մատակարարին,

9) գործարկել բաժանորդին հասանելի շուրջօրյա հեռախոսակապ:

7. Մատակարարն իրավունք ունի՝

1) Բաժանորդին ծառայողական վկայական ներկայացնելով և վերջինիս սեփականությունը հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող տարածք

մուտք գործելով, բաժանորդի հետ համատեղ ստուգել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցման, ապօրինի միացման կամ առևտրային հաշվառքի սարքի (անկախ դրա պատկանելությունից) խախտման դեպքերի առկայությունը,

2) միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ բաժանորդի կողմից սույն պայմանագրի 4-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված պարտավորությունը չկատարելու դեպքում:

## 4. ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

8. Բաժանորդին հաշվարկային ամսում մատակարարված խմելու ջրի քանակը որոշվում է պայմանագրի հավելվածում նշված առևտրային հաշվառքի սարքի գրանցած ցուցմունքներով, իսկ դրա բացակայության դեպքում՝ կանոնների համաձայն:

9. Ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) դեպքում հաշվարկման և վերահաշվարկման ժամանակ հեռացվող ջրի (մաքրվող կեղտաջրերի) քանակն ընդունվում է հավասար բաժանորդին մատակարարված խմելու ջրի քանակին: Սույն պայմանագրով կարող է սահմանվել, որ հեռացվող ջրի (մաքրվող կեղտաջրերի) քանակը հաշվարկվում է առևտրային հաշվառքի սարքի միջոցով:

10. Առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը գրանցում է մատակարարը՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում:

11. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում կատարվում է բաժանորդին մատակարարված խմելու ջրի քանակի և արժեքի վերահաշվարկ՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում:

12. Բաժանորդի կողմից վերահաշվարկի արդյունքին անհամաձայնության դեպքում տարաձայնությունները լուծվում են կանոններով սահմանված կարգով և ժամկետներում, ընդ որում՝ վերահաշվարկված խմելու ջրի արժեքի՝ բաժանորդի կողմից ողջամտորեն հիմնավորված չվիճարկվող մասի վճարման դեպքում բաժանորդին ծառայությունների մատուցումը չի դադարեցվում՝ մինչև վեճի վերջնական լուծումը:

## 5. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Հաշվարկային ամսվա ընթացքում բաժանորդին մատուցված ծառայությունների արժեքը որոշվում է հանձնաժողովի սահմանած սակագների և մատակարարված ծառայությունների քանակի արտադրյալով:

14. Հանձնաժողովի սահմանած սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինն ուժի մեջ է մտնում հանձնաժողովի սահմանած ժամկետից:

15. Հաշվարկային ամսվա համար բաժանորդին մատուցված ծառայությունների դիմաց մատակարարը կազմում և բաժանորդին է ներկայացնում հաշվարկային փաստաթուղթ՝ կանոններով սահմանված կարգով:

16. Բաժանորդը հաշվարկային ամսվա համար իրեն մատուցված ծառայությունների դիմաց վճարում է կանոններով սահմանված կարգով:



17. Կանոններով սահմանված ժամկետում վճարում չկատարվելու դեպքում մատակարարը կանոններով սահմանված կարգով և ժամկետում զգուշացնում է բաժանորդին՝ վճարման, իսկ վճարումը չկատարելու դեպքում՝ ծառայությունների մատուցման դադարեցման մասին: Եթե զգուշացման պահից կանոններով սահմանված ժամկետում բաժանորդը վճարում չի կատարում, ապա մատակարարն իրավունք ունի դադարեցնել ծառայությունների մատուցումը: Բաժանորդի կողմից պարտքն ամբողջությամբ վճարելուց և այդ մասին մատակարարին հայտնելուց (այդ թվում՝ հեռախոսով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) հետո Մատակարարը պարտավոր է վերսկսել բաժանորդին ծառայությունների մատուցումը: Ծառայությունների մատուցումը վերսկսելուց առաջ մատակարարը իրավունք ունի տեղում ստուգել բաժանորդի վճարումը հաստատող փաստաթուղթը:

18. Մատակարարն իրավունք չունի մատակարարվող ծառայությունների համար բաժանորդից պահանջել վճարել կանխավճար կամ ներկայացնել վճարման երաշխիք:

19. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում վերահաշվարկած խմելու ջրի արժեքը և տույժերը (հաշվարկված լինելու դեպքում) վճարվում են կանոններով սահմանված կարգով և ժամկետում:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

20. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով, կանոններով և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

21. Մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարը չվճարելու դեպքում ոչ բնակիչ բաժանորդը մատակարարին յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարվում է տուժանք՝ չվճարված գումարի 0,1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

22. Մատակարարը կանոններով սահմանված դեպքերում բաժանորդին վճարում է տուժանք՝ կանոններով սահմանված չափով և կարգով:

23. Մատակարարը և բաժանորդը միմյանց պատճառած վնասի համար կրում են պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

(լրացնում են Կողմերը)

24. Սույն գլխում կողմերի սահմանած այլ պայմանները չեն կարող հակասել սույն պայմանագրին, կանոններին և հանձնաժողովի այլ իրավական ակտերին:

25. ______________________________________________________:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

26. Կողմերը պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս մաժորի:

Պայմանագրի իմաստով ֆորս մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից անկախ և, միևնույն ժամանակ, անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված կողմերի գործողություններին: Սույն պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղորդվող հորդառատ անձրևներ, ձնաքքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները: Սույն կետը չի սահմանափակում կողմերի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել հանձնաժողով՝ դրանք ֆորս մաժոր ճանաչելու համար:

27. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

## 9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

28. Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հանձնաժողովի միջնորդությամբ: Սույն պայմանը չի սահմանափակում կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

## 10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

29. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով:

30. Սույն պայմանագիրը կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:

31. Հանձնաժողովի կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման (մատակարար-ոչ բնակիչ բաժանորդ) նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում դրանք ուժի մեջ են մտնում հանձնաժողովի սահմանած ժամկետից: Կողմերը պարտավոր են հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:

32. Սույն պայմանագիրը լուծվում է՝

1) կողմերի փոխադարձ համաձայնությամբ.

2) բաժանորդի կողմից միակողմանի՝ այդ մասին մատակարարին տեղեկացնելու և մատուցված ծառայությունների համար ամբողջությամբ վճարելու պայմանով.

3) մատակարարի կողմից միակողմանի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, կանոններով և սույն պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

33. Սույն պայմանագրի փոփոխումը կամ դադարումը կողմերին չի ազատում մինչ այդ պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունների կատարումից:



## 11. ԿՈՂՄԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

34. Կողմերը պարտավոր են գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը միմյանց հանձնել պատշաճ ձևով: Փաստաթղթերը համարվում են պատշաճ ձևով հանձնված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ՝ սույն պայմանագրով նշված ծանուցման վայրի հասցեով կամ հանձնվել են ստացականով, եթե առանձին դեպքերի համար կանոններով կամ սույն պայմանագրով նախատեսված չէ պատշաճ հանձնման կոնկրետ ձև:

35. Կողմերը պարտավոր են սույն պայմանագրում նշված ծանուցման հասցեի փոփոխության դեպքում գրավոր տեղեկացնել միմյանց ծանուցման նոր հասցեի վերաբերյալ:

36. Պայմանագրի անբաժանելի մաս է կազմում առևտրային հաշվառքի սարքի վերաբերյալ հավելվածը:

Մատակարար՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ
Գտնվելու վայրը՝ Ք.Երևան,Աբովյան 66ա
Հեռախոս՝ 1-85
ՀՎՀՀ 02655115
Էլ. փոստ՝ am.water.office.all@veolia.com
Հ/h 11500351562015
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Գործունեության լիցենզիա ԼՁ N 0001
Գլխավոր տնօրեն
___________ Ս.Շահինյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.
Կատարող ___________
(Ստորագրություն)

___________
(Ստորագրություն անվանում)

___________
(պաշտոնը և անուն, ազգանունը)

Բաժանորդ՝ ___________
Գտնվելու վայրը (Բնակության վայրը) ___________
Ծանուցման հասցեն՝ ___________
Էլ. փոստ ___________
Հեռախոս 041-20-22-90

ՀՎՀՀ 03573221

Բանկ ___________

Հ/h 1510015031021029

Բաժանորդ (ֆիզիկական անձ)
___________
(ստորագրություն, անուն, ազգանուն)

(կնիքը՝ առկայության դեպքում)

HATSHIN CONSTRUCT 03573221

**Հավելված**
խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման
(կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման
(մատակարար- ոչ բնակիչ բաժանորդ)
օրինակելի պայմանագրի

**ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

**1. Առևտրային հաշվառքի սարքի տեխնիկական տվյալները**

| zN | Անվանումը | Մակնիշը | Գործարանային № | Առևտրային հաշվառքի սարքի տրամագիծը | Տեղադրման վայրը | Տեղադրման ամսաթիվը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | | RM E1 | 5016150258 | 40 55 | [illegible] | 2024 |
| 2. | | | | | | |
| 3. | | | | | | |
| 4. | | | | | | |

Մատակարար՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ
Գտնվելու վայրը՝ Ք.Երևան,Աբովյան 66ա
Հեռախոս՝ 1-85
ՀՎՀՀ 02655115
Էլ. փոստ՝ am.water.office.all@veolia.com
Հ/հ 11500351562015
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Գործունեության լիցենզիա ԼՋ N 0001
Գլխավոր տնօրեն
________ Ա.Շահինյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.
Կատարող ________
(ստորագրություն)

[illegible]
(Ստորաբաժանման անվանումը)

[illegible]
(պաշտոնը, անուն, ազգանունը)

Բաժանորդ՝
[illegible]
Գտնվելու վայրը (Բնակության վայրը)
[illegible]
Ծանուցման հասցեն՝
[illegible]
Էլ. փոստ —
Հեռախոս 041-20-22-90

ՀՎՀՀ 03573221

Բանկ [illegible]

Հ/հ [illegible]15031021029

Տնօրեն (լիազորված անձ)
[illegible]
(ստորագրություն, անուն, ազգանուն)

(Կնիքի առկայության դեպքում)

Ս

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
«Գ Ե Ղ Ա Մ Ա» մասնաճյուղ
« ԱԲՈՎՅԱՆ » ՇԷՑ

ЗАО "ЭЛЕКТРИЧЕСКИЕ СЕТИ АРМЕНИИ"
филиал "Г Е Г А М А"
РЭС „АБОВЯН"

"ELECTRIC NETWORKS OF ARMENIA" CJSC
"G E G A M A" Branch
REGIONAL ELECTRIC NETWORKS OF "ABOVIAN

e-mail Abovyan_elnet@ena.am

N 167
« 17 » 10 2024թ

ՀՀ Կոտայքի մարզ
Ակունք համայնք
Գ Նոր Գյուղ 1-ին փողոց թիվ 7
«Հատշին Քոնսթրաքթ» ՍՊԸ
տնօրեն՝ Ռուսլան Սերգեյի
Գրիգորյանին

Ի պատասխան «Աբովյան» ՇԷՑ» ներկայացրած Ձեր N3769; 01.10. 2024թ դիմումի հայտնում եմ հետևյալը՝

Ակունք համայնքի գ Նոր Գյուղ, 1-ին փողոց թիվ 7 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքերի 0.4 կվ լարման էլ մատակարարումը կիրականացվի հետևյալ կերպ:

1. Աբովյանի թիվ 2 բաշխիչ կայանի 1-ին և և 2-րդ հատոններից կկառուցվի մոտ. 1800 մ 10 կՎ ստորգետնյա մալուխագիծ:
2. Կտեղադրվի պահանջված հզորությանը համապատասխան ՏԵ:
3. Կառուցվող ՏԵ-ի 0,4 կվ բաշխիչ վահաններից կկառուցվի 0,4 կՎ ստորգետնյա մալուխագծեր մուտքով կառուցվող շենքեր:
4. կառուցապատվող շենքերի մուտքերում, կառուցվող 0,4 կՎ մալուխագծերի վերջում, կտեղադրվեն 0,4 կՎ ենթակայաններ:
5. Հաշվիչ սարքերը կտեղադրվեն արկղերի մեջ շենքերի մուտքերում տեղադրվող 0,4 կՎ ենթավահաններին կից:

«Աբովյան» ՇԷՑ-ի պետ՝ Ս. Սաղոյան

Կատարող՝ Ս.Բաղդասարյան

## ՀԱՎԵԼՎԱԾ 6. Քաղաքաշինական իրադրության հատակագիծ

